ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐԵՆԻ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1-ին կիսամյակի(բացի սեպտեմբերից) դասանյութերը

Կազմող՝ Ա. Կոստանդյան

2021թ.

«Մուրացկանը և հարուստը» (Լ. Խեչոյանի մշակմամբ): **Օ-ո ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունը**

Էլեկտրոնային դասագրքի հղումը՝ http://online.fliphtml5.com/fumf/anuk/#p=1

Ի՞նչ է պատկերված նկարում: Այն ինչպե՞ս կարող եք կապել առածասացվածքների հետ: Քննարկե՛ք և ամփոփե՛ք եզրակացությունը:

Ով ինչ անի, իրեն կանի:

Ինչ ցանես, այն էլ կհնձես:

Լավությո՛ւն արա, ջո՛ւրը գցիր:

- Հեքիաթն ընթերցե՛ք լուռ և հատվածաբար: Յուրաքանչյուր հատվածից հետո հարցե՛ր առաջադրեք միմյանց և ստուգե՛ք՝ ուշադի՞ր եք ընթերցել:

Հատված	Սկիզբը
2-րդ	*Մուրացկանը երդում-կրակ է ուտում....*
3-րդ	*Մուրացկանը խրճիթի դռնակը պինդ փակում է....*
4-րդ	*Մեծահարուստը սպասում է մի քանի ժամ:*
5-րդ	*Մի շոգ օր մուրացկանը....*
6-րդ	*Այդ պահին արքունի պաշտոնյաները....*
7-րդ	*-Եթե քո դրամը վայելել չես կարող....*

Աշխատե՛ք զույգերով: Յուրաքանչյուր հատվածը ներկայացրե՛ք մեկ նախադասությամբ այնպես, որ ընդամենը ութ նախադասությամբ պատմեք հեքիաթի սյուժեն: Միասին ընտրե՛ք ամենատպավորիչ պատմող զույգին:

Օր.՝ 1. Հարուստը ետ է ուզում մուրացկանին սխալմամբ տված ոսկին:

- ա/Նկար-հուշումների և հեքիաթի օգնությամբ գրի՛ր նորածանոթ բառերի բացատրությունը։

Քողտիկ - _____

Խորտիկ - _____

Սողնակ - _____

Արքունիք - _____

Կճուճ – _____

Մախաղ – _____

Մեծատուն – _____

Աղիողորմ - _____

բ/ Պատկերազարդ բառարանիդ բառերը որոշ փոփոխություններով տեղադրի՛ր վանդակների փոխարեն։

[ ] մեջ իր ձեռքով պատրաստած պանիրն էր։

Մի օր էլ [ ] որոշեց ունեցվածքը բաժանել։

Անտառապահը փայտաշեն [ ] էր ապրում։

Զինվորը դժվարությամբ բացեց դարպասի [ ]

Ծերուկը միայնությունից [ ] արտասվում էր։

Թագավորն [ ] էր հրավիրել երկրի բոլոր կտրիճներին։

Քաղցածին անուշահամ [ ] ասես աչքով էին անում։

Տղան [ ] ուսն առավ ու երկար ճամփի ծայրը բռնեց։

գ/ Նոր սովորածդ բառերը երկուական գործածի՛ր նույն նախադասության մեջ։ Այդ սկզբունքով կազմի՛ր առնվազն չորս նախադասություն։

«Տարօրինակ» զրույց-քննարկում

- **Համաձայնե՛ք կամ հակադարձե՛ք հերոսների պնդումներին։**

- Մուրացկանությունն էլ աշխատանք է, համաձայն չե՞ք:

- Ինձ համար այդ ոսկին շատ կարևոր էր, ինչպե՞ս չեք հասկանում:

- Բա՛խտն ինձ նվիրեց այդ ոսկին. ես ինչո՞ւ պիտի վերադարձնեի:

- Ես պարտավոր էի պատժել ստախոսին:

- Ես կայացրի իմ կյանքի լավագույն որոշումը:

Աշխատե՛ք զույգերով: Հեքիաթը ներկայացրե՛ք միայն երկխոսություններով:

- Հանդե՛ս եկեք հերոսների անունից: Կարող եք այսպես սկսել.

Մի շոգ օր սովորականի պես ողորմություն էի խնդրում անցնող-դարձողից....

Բանն այսպես եղավ: Սայլս կանգնեցրի, որ շուկա մտնեմ....

Մի օր պաշտոնյաներս ինձ մոտ բերեցին մի մուրացկանի....

- Ենթադրի՛ր, թե թագավորն այլ որոշում է ուզում կայացնել, դու էլ նրա խորհրդականն ես: Հորինի՛ր որոշումները և ասա՝՝ ինչ խորհուրդ կտաս:

Խելամիտ որոշում

_____
_____
_____
_____
_____
_____

Անհեթեթ որոշում

_____
_____
_____
_____
_____
_____

- Երևակայի՛ր, թե հեքիաթի միջադեպին ներկա էիր: Ներկայացրո՛ւ եղելությունը որպես ականատես:

Իմ աչքերով տեսա...	Իմ ականջներով լսեցի...

Աշխատե՛ք խմբերով: Հարցին պատասխանելով՝ ձեզնից յուրաքանչյուրը թող թերթիկի վրա մեկ միտք գրի: Խմբի ավագը թող միավորի և ամփոփ ներկայացնի:

Ինչպե՞ս կվարվեր՝

ա/ մուրացկանը, եթե մեծատունը սպառնար ու վախեցներ,

բ/ մեծատունը, եթե մուրացկանը մեկ ոսկու փոխարեն մի քանիսը վերադարձներ,

գ/ թագավորը, եթե պաշտոնյան նրան հուշեր, որ ի՛նքը կարող է տիրանալ ոսկիներին:

- Երկու տարբերակով ընդարձակի՛ր մուրացկանի զրույցը դրամների հետ.

ա/ - Իմ լա՛վ դրամներ, ես անարդար ճանապարհով եմ հավաքել ձեզ. . . ,

բ/ - Իմ սիրելի՛ դրամներ, ես ամեն ինչ կանեմ, միայն թե ձեզնից շատ ունենամ. . . :

Աշխատե՛ք խմբերով: 1-ին խումբը տեքստից դուրս կգրի դարձվածքները, 2-րդը՝ տեքստում եղած հոմանշային զույգերը, 3-րդը՝ **ե, օ, ռ** ունեցող բառերը:

1-ին խումբ՝ ***Դարձվածքագետներ***

Դարձվածք	Իմաստը

2-րդ խումբ՝ ***Հոմանշագետներ***

Բառը տեքստում	Հոմանիշը տեքստում

3-րդ խումբ՝ ***Ուղղագրագետներ***

Ե-ն բառասկզբում	Օ-ն բառասկզբում և բառամիջում	Ռ-ն բառասկզբում և բառամիջում

- Բառերից որո՞ւմ չի կարող լինել՝

օր	*օղ*	*օղ*	*օթ*	*օրեն*
այս-ր	պնդ-ղակ	ան-դ	հրան-թ	ան-րեն
կես-ր	ձախ-ղակ	վառ-դ	բաց-թյա	տն-րեն
աման-ր	տափ-ղակ	հակա-դային	ան-թևան	մեղմ-րեն

- ***Օրը*** և ***օրինակը*** սխալ տեղերում են հայտնվել: Փոխելով նրանց տեղերը՝ բառե՛ր կազմիր:

- ա/Բառամասերի խառնաշփոթ է։ Մի քանիսի տեղերը փոխելով՝ ճիշտ բառե՛ր կազմիր։





- ա/Լրացրո՛ւ բաց թողած տառերը, փոխանցի՛ր ընկերոջդ, որ ստուգի։





բ/Վանդակներում լրացրո՛ւ *օ* կամ *ո*:

Ան□րեն թագավորն այդքան անզ□ռ ու ան□գնական չէր եղել:
Կես□րին նա կանչեց տար□ինակ կախարդին և կոպտ□ն ասաց.
- Դեղերն ան□գուտ են. ան□ռոշ վիճակում եմ:
- Առ□ական գործերն այլևս կարև□ չեն: Գիշերուզ□ պետք է
□ռոնենք քո կրկն□ինակին,- խստ□ն ասաց կախարդը:
Միջ□ին հանդիպեցին մի ան□թևան մուրացիկի…

գ/Լրացրո՛ւ և փորձի՛ր չսխալվել:

Ման-ր, միջ-ոե, փորձան-թ, քնքշ-ոոր, բարձր-ակ, եռ-ոյա, ան-ոինակ, արփիազ-ծ, պնդ-ղակ, ան-թևան, դաժան-ոեն, գիշերուզ-ր, առ-ոական, նախ-ոե, գիշեր-թիկ, այդ-ոինակ, նախ-ոոք, ապ-ոինի, թռչն-ոս, հնա-ճ, բն-ոոան, վճռ-ոոշ, ան-ղնաշար, հն-ոյա, ան-ղոոմ, քաջ-ոդի, ջր-ոհնեք, անձրևա-ոդ, ընդ-ոինակել, կրկն-ոինակ, օրըստ-ոե,փոքր-գի, նման-ոինակ, աշխուժ-ոեն, թթ-ղի:



Աշխատե՛ք խմբերով։ Քարտերին սխալ գրված բառերը գցե՛ք *սխալատուփի* մեջ՝ ձեզ մոտ նշելով ճիշտ տարբերակները, իսկ ճիշտ գրվածները՝ *ուղղատուփի* մեջ։ Ավարտելուց հետո միասին ստուգե՛ք։



- ա/Նույն գրությամբ բառերը հավաքվել են միևնույն նախադասության մեջ։ Ո՞րն է յուրաքանչյուրի տառը։

Վ-լոդյայի եղբոր-ղին ձկն-րս էր։

Արծաթազ-ծ վիշապ-ձը -ղակվել էր։

Արքայ-ղին ան-ղոք -ղսորդ էր։

Արփիազ-ծ -վկիանոսն ան-ղինակ էր։

Այս-ր կես-ղին -թևանեցին գիշեր-թիկում։

Հն-ղյա բն-ղրանս օրեց-ր նոր-ղյա էր դառնում։

բ/Դու ևս փորձի՛ր նմանօրինակ նախադասություններ կազմել։

- Օ-ով սկսվող ո՞ր բառով կբացականչի մուլտֆիլմի հերոսը յուրաքանչյուր իրավիճակում:

- . . . . ., ի՜նչ համեղ է:

- . . . . . ., ի՜նչ շքեղ տորթ է:

- . . . . . , գլխացավս չի անցնում:

- . . . . ., այս ի՞նչ տարօրինակ ձայն է:

- . . . . . ., մուրաբան վերջացա՞վ, ինչ է:



Աշխատե՛ք զույգով։ Վանդակներում լրացրե՛ք տառերը և 3-4 նախադասությամբ պատմե՛ք, թե ինչպես են պատկերվածները կապվում իրար։

ա/



	ո	

	ա			ր

	ա			ր		ի

		կ		զ

	շ		ո	կ

բ/

տ		փ		ղ		կ

		կ		յ

	լ		մ		ի		դ

- Յուրաքանչյուր բառին բառատուփից երեք հատկանի՛շ «նվիրիր»՝ նախապես լրացնելով տառերը։



- Տեքստից հանի՛ր և աղյուսակում գրի՛ր հարցերին պատասխանող բառեր։

Ո՞վ	Ի՞նչ է անում	Ե՞րբ	Ինչպե՞ս	Որտե՞ղ

- Թավ գրված բառերը փոխարինի՛ր իրենց հականիշներով և տե՛ս, թե տեքստն ինչպես է փոխվում:

Մի *շոգ* օր ***աղքատը***, ***պայծառ*** արևի տակ պառկած, դրամ էր ***խնդրում***: Մոտեցավ ***հարուստը*** և բացելով իր ***լիքը*** քսակը՝ ***շռայլորեն*** մի ***մեծ*** ոսկեդրամ նվիրեց նրան:

- Պարզի՛ր՝ գիտե՞ս արդյոք նույն բառի և՛ հոմանիշը, և՛ հականիշը:



- Ինչպե՞ս կձևափոխվեն բառերը տարբեր հարցերի պատասխանելիս։

ա/

Ո՞վ/Ի՞նչ	Ո՞ւմ/Ինչի՞
ժամ	
նա	
մարդ	
ոսկի	
գիշեր	
մեծատուն	

Ի՞նչ	Որտե՞ղ
կտուր	
երկինք	
աշխարհ	
հատակ	
ճանապարհ	
տուն	

- ա/Տեքստում գտի՛ր գծիկով գրվող բառերը, ապա դեմ դիմաց գրվածները ճիշտ միացնելով՝ նմանօրինակ բառե՛ր ստացիր։

առոք	*անհամար*
կիսատ	*մոլորած*
մանր	*ցերեկ*
քաղցր	*մունր*
աղմուկ	*փառոք*
գիշեր	*պռատ*
անթիվ	*մեղցր*
կորած	*աղաղակ*

բ/Քո ընտրությամբ գծիկով գրվող բառերից հինգը գործածի՛ր նախադասություններում։

գ/Գծիկով գրվող բառերից հինգը գործածի՛ր մտքով իրար հետ կապված նախադասություններում։

- ա/Դեմ դիմաց գրված նախադասություններից ընտրի՛ր փոխաբերական իմաստով գործածվածները։

Արևը ծաղկել է։		*Արևը ծագել է։*
Քամին փչում է։		*Քամին մոլորվել է։*
Ծովը ծփում է։		*Ծովը զայրացել է։*
Գետը փախչում է։		*Գետը հոսում է։*
Շողերը երևացին։		*Շողերն օծել են։*
Լեռը մռայլվել է։		Լեռը կանաչել է։

բ/ Փոխաբերական իմաստով նախադասությունները հարստացրո՛ւ լրացումներով։

գ/ Փոխաբերական իմաստով նախադասությունները լրացումներով հարստացնելով՝ մի գեղեցիկ բնապատկե՛ր նկարագրիր։

- Հեքիաթն ընթերցելիս ի՞նչը քեզ բարկացրեց, ուրախացրեց կամ տխրեցրեց. երկուական պատճա՛ռ նշիր։

	Բարկացա	Ուրախացա	Տխրեցի
Ե՞րբ և ինչո՞ւ			

- Հեքիաթի օրենքներով երկնքից երեք խնձոր ընկավ: Գրի՛ր, թե ում կբաշխես:

Կարմիրը կտամ. . . . . .

Կանաչը կտամ.....

Դեղինը կտամ. . . . . .

- Ամփոփիչ քննարկո՛ւմ անցկացրեք:

1. Ի՞նչ է նշանակում հարուստ լինել, ո՞րն է իրական հարստությունը:
2. Բարեկեցիկ ապրելու ի՞նչ ճանապարհ կընտրեք:
3. Ամեն բանի կդիմե՞ք հարստանալու համար, թե՞ ձեր քայլերի մեջ ընտրություն կանեք:
4. Ձեր առջև երկու տուն է, որտեղ մարդիկ են ապրում: Ի՞նչ եք կարծում, ինչի՞ց է կախված նրանց երջանկությունը՝ տան մեծությունի՞ց, շքեղությունի՞ց, թե՞ այլ բաներից:

Երևակայե՛ք, թե ճանաչում եք այս տների բնակիչներին։ Ներկայացրե՛ք իրավիճակներ, որոնցով ցույց կտաք՝ ինչպիսին են նրանք, ինչպես են ապրուստ վաստակում, որտեղ է ապրում իսկական երջանկությունը, և վերջապես ո՛ր տարբերակն է ձեզ համար նախընտրելի։

Բաժանվե՛ք խմբերի։ Աղյուսակում թվարկե՛ք հատկանիշներ, որոնք ձեզ՝

(1-ին խումբ) **հարուստ կդարձնեն**	**աղքատ կդարձնեն** (2-րդ խումբ)

Տնային պարտադիր առաջադրանքներ

- Ուղղի՛ր սխալները: Աղյուսակը քեզ կհուշի՝ ինչպես աշխատես:

Միջորե, բացոթյա, երբևէ, հնէաբան, ամենորյա, անոթ, որևիցէ, անօրեն, ամանօրյա, ովքեր, վայրէջք, հրէշ, ոսկեզոծ, այսօր, կեսոր, ականջօղ, տարորինակ, օրորոց, օրեցոր, հնօրյա, անէական, առօրէական, հնգօրյա, անօրակ, անօգուտ, ապորինի, անօդաչու, նախորոք:

Ճիշտ էր գրված	*Սխալ էր, շտկեցի*

Հարցազրո՛ւյց վարիր ընտանիքիդ անդամներից մեկի հետ *«Ո՞րն է իսկական հարստությունը»* թեմայով: Հարց ու պատասխանը գրի՛ առ և ներկայացրո՛ւ դասարանում:

Տնային ոչ պարտադիր առաջադրանքներ

Եթե սիրում ես կարդալ, նշված հղումով մո՛ւտք գործիր և ընթերցի՛ր «Աղքատ մարդիկ» փոքրիկ, իմաստուն պատմությունը։

https://grqaser.org/am/detail/index/sArticle/745

Իմաստուն պատմություններ կամ գեղեցիկ

Դիտի՛ր «Մուրացկանը և հարուստը» հեքիաթի հիման վրա նկարահանված անիմացիոն ֆիլմը, որի յութուբյան հղումն է՝ https://www.youtube.com/watch?v=wPnU-HNR98k:

Եթե սիրում ես նկարել, նկարազարդի՛ր «Մուրացկանը և հարուստը» հեքիաթի որևէ դրվագ։

Նկարելուկում թաքնված բառին հանդիպեցիր հեքիաթում։ Փորձի՛ր կռահել։

+ +

1, 1, _____

Նկարներն ու իրենց անվանումները քեզ ծանոթ են: Նախ լրացրո՛ւ **օ** կամ **ռ**՝ բացատրելով բառը, ապա տեղեկություններ՝ գտիր և գրի՛ր աղյուսակում:

Գիտեի	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Օր.՝ **օազիս**-կանաչապատ տեղ անապատում	*Ինչպե՞ս է գոյանում փոքրիկ, կանաչ հրաշքն անապատում: Որտեղի՞ց է ծագում «օազիս» բառը:*	
փղ-սկր		
վ-լեյբոլ		
- վկիանոս		
սարդ-ստայն		

Կարող եք աշխատել խմբերով:

Մկ. Կորյուն, «Այգեպան Մոսին»: Ը ձայնավորի ուղղագրությունը և ուղղախոսությունը

Աշխատե՛ք խմբերով: Նայե՛ք նկարներին և նկարագրե՛ք այն, ինչ տեսնում եք:

1-ին խումբ



2-րդ խումբ

- Քննարկե՛ք և միասին պարզե՛ք՝ հնարավո՞ր է արդյոք անապատը ծաղկուն այգի կամ պարտեզ դարձնել: Եզրակացություններն ամփոփե՛ք աղյուսակում:

- Ո՛չ, անհնար է: - Ինչո՞ւ:	- Այո՛, հնարավոր է: - Ինչպե՞ս:

- Նախադասություններից կռահի՛ր կարմրագույն բառերի իմաստները. շուտով քեզ պետք են գալու: Կազմի՛ր քո փոքրիկ բառարանը:

Արծիվն ամպերից էլ վեր էր **ճախրում**:

Քամին կոտրեց ծառի դալար **ընձյուղները**:

Որդին ոչ թե **նսեմացրեց**, այլ մեծարեց հորը:

Բոլոր օրինախախտներին **վտարեցին** երկրից:

Երազային **տեսիլքը** նրան իրական էր թվում:

Ալիքները **ծառացան** ու նավն իրենց գիրկն առան:

Փիրուզե լիճը կարծես կապույտ երկնքի կտոր լիներ:

վռնդել, դուրս անել

կապտավուն

բարձրանալ, խոյանալ

թռչել, սավառնել

աներևույթ պատկեր

արժեզրկել, պատվազրկել

բարակ ճյուղ, շիվ

- Հեքիաթն ընթերցե՛ք հատվածաբար՝ շարունակելով միմյանց:

«Ժողովուրդը համոզված էր….» նախադասությունից հետո կա՛նգ առեք և ընտրելով տարբերակներից մեկը՝ կռահո՛ւմ արեք։

- ☐ *Թագավորը Մոսիին դարձրեց իր գլխավոր այգեպանը։*
- ☐ *Մոսին մեծամտացավ և արհամարհեց թագավորին։*
- ☐ *Թագավորը երկրից վտարեց այգեպանին։*
- ☐ *Թագավորն ընտիր պարգևներ տվեց այգեպանին։*

Այլ տարբերակ՝ _____

Զրույց-քննարկում

1. Ո՞րն էր այգեպանի զորության գաղտնիքը։
2. Ինչո՞ւ էին մարդիկ երջանիկ ծաղկած անապատում։
2. Ի՞նչ ես կարծում, թագավորը խոստում տալիս չէ՞ր հավատում անապատի ծաղկելուն։ Ինչո՞ւ հետո դրժեց։
3. Ինչո՞ւ այգեպանը հենց բահն ընտրեց որպես ամենաթանկ բան։
4. Մեկնաբանի՛ր թագավորի տեսիլքները։
5. Ի՞նչ կարող է անել զայրացած ժողովուրդը, որից թագավորը զգուշացավ։

Աշխատե՛ք խմբերով։ Աղյուսակները կհուշեն, թե ո՛ր խումբն ինչ է դուրս գրելու տեքստից։

1-ին խումբ՝ ***Գեղեցկագետներ***

Փոխաբերաբար գործածված բառեր կամ նախադասություններ

2-րդ խումբ՝ ***Իմաստագետներ***

Բառեր՝ ըստ իմաստային հուշումների

3-րդ խումբ՝ ***Ուղղագրագետներ***

Գրվող *ը*-ով բառեր	Գաղտնավանկ *ը*-ով բառեր

4-րդ խումբ՝ ***Հարցագետներ***

Բառակապակցություններ՝ *Ինչպիսի՞ ի՞նչ*

ա/Աշխատե՛ք զույգով: Տեքստը բաժանե՛ք չորս մասի և վերնագրե՛ք:

1.	2.	3.	4.

բ/Յուրաքանչյուր հատվածից դո՛ւրս գրեք՝

Ամենակարևոր միտքը	Ամենագեղեցիկ միտքը	Ամենաջերմ միտքը	Ամենազարմացնող միտքը

- Քո ընտրությամբ վերաշարադրի՛ր՝

ա/ հեքիաթի երկու մասը համառոտ,

բ/ հեքիաթի մի մասն ընդարձակ,

գ/ հեքիաթի մի մասն ընդարձակ, մեկ այլ մաս՝ համառոտ՝ 4-5 նախադասությամբ:

- Պատկերացրո՛ւ, թե ներկա ես հեքիաթում: Պատմի՛ր տպավորություններիդ մասին:

Ի՞նչ գույներ եմ տեսնում: _____
Ի՞նչ ձայներ եմ լսում: _____
Ի՞նչ եմ զգում: _____
Ինչի՞ց եմ զարմանում: _____
Ինչո՞վ եմ հիանում: _____

- ա/Բնութագրի՛ր 3-ական հատկանիշով. ինչպիսի՞ն էին՝









բ/ Բնութագրի՛ր Մոսիին և թագավորին՝ հորինելով այլ իրավիճակ նս։

գ/ Բնութագրի՛ր՝ ա/ ***թագավորին Մոսիի անունից***, բ/ ***Մոսիին թագավորի անունից***, գ/ ***երկուսին էլ ականատեսներից մեկի անունից***.

- Օրինակներին հետևելով՝ այնպիսի բառամասե՛ր գրիր, որ բառեր կազմվեն։





- Երկուական բառամաս միացնելով՝ բառե՛ր կազմիր և գտի՛ր գաղտնավանկ ը-ն։



Աշխատե՛ք զույգով։ *«Բառակազմական արևների»* ճառագայթներին գրե՛ք բառամասեր և բառե՛ր կազմեք։



- Նախ հիշի՛ր՝ գծիկների տեղում *ը*-ն գրվում է, թե ոչ, ապա փորձի՛ր երևակայել, թե ***ինչ կարող է կատարվել՝***

Մի ակ-նթարթում _____

Լուս-նկա գիշերը _____

Անակ-նկալ նվեր -ստանալիս _____

Քաղաքում –զբոսնելիս _____

Դպրոց -շտապելիս _____

- Հուշումների տեղում գրի՛ր այն բառերը, որոնք կազմվում են բառասկզբի ***ի*** և ***ու*** ձայնավորների հնչյունափոխությամբ։



- Առանձնացրո՛ւ բառասկզբում և բառամիջում գաղտնավանկ ը ունեցող բառերը՝ գրելով դրանք շրջանների մեջ:



- ա/ Ը-ն կգրե՞ս, թե՞ ոչ:

Անակ-նկալ, ան-նդհատ, -նկույզ, դաս-նկեր, ակ-նհայտ, արագ-նթաց, առ-նչվել, ազգ-նտիր, հյուր-նկալել, -սկսել, ձկ-նկիթ, չ-նկալել, ճեպ-նթաց, -զբոսանք, -նտիր, -սպասում, լուս-նկա, մեկ-նդմիշտ, ակ-նթարթ, գործ-նկեր, հետ-զհետե, -շտապել, -նտանիք, սր-նթաց, օր-ստօրե, գույն-զգույն:

բ/Բառերի եռյակները գործածի՛ր նույն նախադասության մեջ անհրաժեշտ տեղում ը-ն գրելուց հետո:

անակ-նկալ
–սթափվել
գործ-նկեր

-նտանիք
-զբոսանք
լուս-նկա

-մպելիք
հյուր-նկալ
-նտիր

գ/Ը-ի ուղղագրության բառերի գործածությամբ մի փոքրիկ պատմությո՛ւն հորինիր ***«Ես այգեպան էի. տեսի՞ք էր...»*** վերնագրով:

- Ածանցները բառերին միացրո՛ւ քայլաշարով և գրի՛ր շղթայի օղակներում: Օրինակը կօգնի քեզ: Ո՞ր ձայնավորն է «թաքնված» կազմածդ բառերում:

բուռ/ն/	բռնակ	բռնակավոր
շուրջ		
նիշ		
գլուխ		
գունդ		
գիր		

ակ ություն

ային ավոր ան

ական իկ

Աշխատե՛ք խմբերով: Բառատուփից հանե՛ք հավասար թվով քարտեր, որոնց վրա է-ե, օ-ո, ը ձայնավորների ուղղագրության բառեր են: Տառերը լրացնելուց հետո կատարե՛ք փոխադարձ ստուգում:



- ա/Օրինակներից բացի փոխաբերական իմաստով է՞լ ինչերը կարող են լինել՝



բ/ Փոխաբերական իմաստով բառակապակցություններից հինգը գործածի՛ր նախադասություններում։

գ/ Նախադասությունները ձևակերպի՛ր դարձյալ փոխաբերաբար գործածված այլ բառերով և ընդարձակի՛ր նկարագրությունները։

Վերջալույսը ոսկու մեջ էր ընկղմել երկիրն ու երկինքը։

Երկինքն իր աստղերի ոոկույզներով լցվել էր լճի մեջ։

- Ինչի՞ մասին կարող են զրուցել կախարդական այգու պտուղները։

_____

_____

_____

Նկարների հուշումով ամբողջացրո՛ւ մասնագիտությունները, որոնցում կա նաև Մոսիինը։

			ա	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ
			ե	գ	ո	ր	ծ
			ե	գ	ո	ր	ծ
			ա	գ	ո	ր	ծ

Աշխատե՛ք զույգով: Պարզե՛ք՝ ճանաչո՞ւմ եք ծառերն ու թփերը:

1. Ո՞ր ծառի պտուղներն են թափահարելով հավաքում: _____

2. Ո՞ր ծառն է ապրում 500-600, երբեմն 1000 տարի: _____

3. Ո՞ր բույսի ծակոցից պետք է զգուշանալ: _____

4. Փշատերև ծառերի վրա ինչե՞ր են աճում: _____

5. Ո՞ր ծառն է բարձրահասակ ու սլացիկ: _____

6. Ո՞ր բույսն է «կծան», բայց առողջարար: _____

7. Ի՞նչ է «լացող ու խոնարհ» ծառի անունը: _____

8. Ո՞ր ծառի հայրենիքն է Հայաստանը: _____

9. Ո՞ր ծառի ծաղիկն է իր իսկ պտուղը: _____

10. Ո՞ր ծառաբույսն են աշնանը թաղում, գարնանը՝ հանում: _____

- ա/Նույն «հագուստով» բառերից մեկի իմաստը գրված է, մյուսը դու ի՛նքդ ասա։

Արքան չէր ուզում զրկվել կյանքից ու կայքից։ → ունեցվածք

Կայքում հետաքրքիր տեղեկություններ գտա։ →

Տատս նախշազարդ գուլպա էր գործել։ → կատարել

Այգեպանը հանցանք չէր գործել։ →

Իմ առջև բացվեց անծայրածիր անապատը։ → ճգնավորների վանք

Հեռվից երևում էր վանական անապատը։ →

բ/Քո ընտրությամբ բառերից երկուսը երկու իմաստով էլ գործածի՛ր նախադասություններում։

Երրորդն ավելորդ է: Ո՞ր բառն իմաստով մոտ չէ մյուսներին. նշի՛ր։

ընչաքաղց

- անկուշտ
- անկարգ
- ագահ

վտարել

- կանչել
- դուրս անել
- լոնդել

ընկղմվել

- սուզվել
- ընկնել
- թաղվել

ունկնդրել

- ընկալել
- լսել
- ականջ դնել

համբավ

- հոչակ
- իառք
- ործ

ահեղ

- ահարկու
- թույլ
- սարսափելի

Օրինակի նմանությամբ երկու բառ էլ ի՛նքդ գրիր։



- «Մահաբեր խրձով» փայլատակող կայծակի մասին տեղեկության մեջ բառերն իրենց տեղերում չեն: Ճի՛շտ դասավորիր:

մթնոլորտային երևույթ Կայծակը է: Այն պայծառ որոտով ու բռնկումով լույսի դրսևորվում է: տեսնում ենք լույսը Սկզբում, ապա ձայնը լսում ենք. չէ՞ որ տարբեր են արագությունները լույսի և ձայնի: լինում են Կայծակները գծային, ժապավենաձև և օղաձև: համարում էին մարդիկ Հնում կայծակը պատիժ աստվածային:

- Շարունակելով ամբողջացրո՛ւ մտքերը:

Մարդիկ երջանիկ էին ծաղկած անապատում. չէ՞ որ_____:

Թագավորը գնաց այգի, որպեսզի_____:

Թագավորը զայրացավ, քանի որ_____:

Թագավորի մարդիկ հիանում էին, բայց _____:

Այգեպանը կհեռանար, եթե _____:

Թագավորը հեռացավ, երբ_____:

- Հեքիաթում ի՞նչը քեզ զարմանալի, տարօրինակ կամ գեղեցիկ թվաց: Գրի՛ր աղյուսակում:

Զարմանալի էր	Գեղեցիկ էր	Տարօրինակ էր

- Ի՞նչ տվեց քեզ այս հեքիաթը: Հարցաթերթիկի օգնությամբ պարզի՛ր:

Ընթերցեցի ինչպե՞ս _____

Ինձ դուր եկավ ո՞վ/ի՞նչը _____

Չսիրեցի ո՞ւմ/ի՞նչը _____

Հիացա ումո՞վ/ինչո՞վ _____

Կփոխեի ի՞նչը _____

Սովորեցի ի՞նչ _____

Տնային պարտադիր հանձնարարություն

- Աղյուսակում գրի՛ր *ը*-ի ուղղագրության բառեր։

Գրվող ը-ն բառասկզբում	Գրվող ը-ն բառամիջում	Գաղտնավանկ ը-ով բառեր

Տնային առաջադրանքներ

- Հեքիաթից դո՛ւրս գրիր դարձվածքները, բացատրի՛ր և գործածի՛ր նախադասություններում։

Դարձվածք	Իմաստը	Գործածությունը
1.		

- Ը-ի ուղղագրության բառերի և դարձվածքների գործածությամբ մի փոքրիկ հեքիա՛թ հորինիր ու նկարազարդի՛ր։

Համացանցից կամ այլ աղբյուրից տեղեկություններ՝ հավաքիր ***ընկուզենու*** և ***կաղնու*** մասին: Գրառումներդ ներկայացրո՛ւ դասարանում:

Ընկուզենի

Կաղնի

Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»: Յ ձայնակապի ուղղագրությունը

- Քննարկո՛ւմ անցկացրեք ***«Բարու ծա՛յրը բռնիր»*** թեմայով: Հարցերը կօգնեն ձեզ:

  1. Ի՞նչ ես հասկանում՝ «բարու ծայրը բռնել» ասելով:
  2. Ինչո՞ւ է կարևոր դիմացինին օգնելը:
  3. Լավություն անելիս պե՞տք է սպասել վարձատրության:
  4. Մի՞շտ է արդյոք բարությունը նպատակին ծառայում:
  5. Դո՞ւ ինչպես ես ապրում՝ դիմացինիդ օգնելո՞վ, թե՞ միայն ինչպես քեզ է հարմար:
  6. Ո՞ր գույներն են գերակշռում բարության մեջ: «Բարության խճանկա՛ր» պատկերիր:

- Կարդացե՛ք մտքերը, մեկնաբանե՛ք և կռահե՛ք, թե ում գրի առած հեքիաթն եք ընթերցելու: Շրջանակում ընտրե՛ք նրա լուսանկարը:

Աշխարհքին ու մարդուն նայել բարի սրտով ու պայծառ հայացքով։

Մարդու երջանկության աղբյուրը իր սիրտն է։

Արևի նմա՛ն նայեցեք աշխարհքին։



- Բաժանվե՛ք 3 խմբի, և յուրաքանչյուր խումբը թող որոշի՝ ինչպես ընթերցի հեքիաթի մի մասը.

ա/ դերային ընթերցում,

բ/ շղթայաձև ընթերցում,

գ/ հատվածական ընթերցում։

- Բառերն իրենք են պատմում իրենց մասին։
  ա/Հեքիաթում որո՞նք են կարմրագույն բառերը։

- Ես **եղջերուն** եմ՝ փառահեղ կենդանի, «անտառի զարդը»։

- Հին **կոշիկ** եմ՝ կիսամշակ կաշվից պատրաստված։

- Ես **ցանց** եմ. ինձ գցում են ջուրը և ձկներով լի հանում։

-Անկեղծ ասած՝ չգիտեմ էլ, թե ում **ստվերն** եմ։

- Տաք **մուշտակ** եմ, առանց որի Ձմեռ պապն էլ կմրսի։

- Ես **բեռնակիր** եմ, բեռը շալակած եմ տանում։

բ/ Հեքիաթում որո՞նք են կարմրագույն բառերի հոմանիշները։

Այդ **սարսափելի** հրեշի սիրտն այնքա՜ն բարի էր։

Մաուգլին **մտմտուքի** մեջ էր. «Ի՞նչ ասեր նրան»։

Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսին է **չորացած** գետը։

Վիննի Թուխը շիվարած նստել ու մտածում էր՝ ինչ անի։

Մայրամուտը գունազարդել է ձմեռային **երեկոն**։

Զրույց-քննարկում

1. **Ինչպիսի՞ մարդ էր շալակտարը։**
2. **Ճի՞շտ վարվեց ձկնորսը, որ նրան հեռացրեց։**
3. **Ի՞նչը մղեց հրեշին կովը տալ շալակտարին։**
4. **Քեզ դուր եկա՞ն երիտասարդի պատասխանները, թե՞ դու ավելի դիպուկ կպատասխանեիր։**
5. **Ո՞րն է հեքիաթի ասելիք-նախադասությունը։ Ուրիշ ինչպե՞ս կձևակերպես այն։**

- Բաժանվե՛ք խմբերի և մրցո՛ւյթ անցկացրեք՝ ով ավելի շատ դարձվածք դուրս կգրի հեքիաթից, կբացատրի իմաստը և հոմանիշ կամ հականիշ դարձվածք կգրի։

Դարձվածք	Իմաստը	Հոմանիշ կամ հականիշ դարձվածք
աշխարհով մեկ լինել	ուրախանալ	աշխարհն իրենը լինել

- Հեքիաթի 3 մասերից մեկական հատված ընթերցե՛ք տարբեր հնչերանգներով՝



- Կազմե՛ք հեքիաթասացների երեք խումբ: Յուրաքանչյուր խումբը թող ինքը որոշի՝ ինչպես վերապատմի հեքիաթի մի մասը:

- Ո՞ր բառերով կնկարագրես՝ ա/շալակտարին, բ/երիտասարդին։ Ընտրի՛ր և նկարագրի՛ր։



- Հեքիաթից ընտրի՛ր 3 կարևոր իրադարձություն և գրի՛ր աղյուսակում։

Ե՞րբ	Որտե՞ղ	Ի՞նչ պատահեց	Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով

- ա/Տեքստի բառերից յուրաքանչյուրին «նվիրի՛ր» մեկական հոմանիշ և հականիշ։



բ/ Հեքիաթում ևս գտի՛ր հոմանիշ ու հականիշ բառերը և դո՛ւրս գրիր։ Կազմի՛ր բառարան-աղյուսակ։

Բառ	Հոմանիշ	Հականիշ

գ/ Փոքրիկ շարադրա՛նք գրիր *«Տարօրինակ հրեշը»* վերնագրով՝ նույն նախադասություններում գործածելով և՛ հոմանիշներ, և՛ հականիշներ։

- Շարունակի՛ր անավարտ մտքերը՝ անհրաժեշտ տեղում գրելով *յ ձայնակապը*:

Չկնոջսին ծառա-ելու ժամանակ _____

Եթե ձկանը փնտրե-ին և _____

Ծնողները կուրախանա-ին, երբ _____

Ընկերները կտխրե-ին. չէ՞ որ _____

Չկան կյանքը խնա-ելու պատճառով _____

Եթե ուրիշները լինե-ին, _____

Չգիտեմ՝ ինքս կխղճա-ի՞ _____

Ես ձկնոջսին խորհուրդ կտա-ի _____

Հենց որ հրեշին հանդիպե-ի , _____

Բայց եթե հյուրին չընդունե-ին, _____

Ո՛ւր էր թե տեսնե-ի _____

- ա/Յ-ն կգրե՞ս, թե՞ ոչ:

Հայհո-անք, մի-այն, ժողովածու-ի, ոոպե-ով, հո-ակապ, ջղա-ին, Եվրոպա-ում, մեղեդի-ով, թե-ման, գրկե-ին, ներկա-ացում, երեկո-ան, մի-ակ, գո-ություն, ազգա-ին, Հռիփսիմե-ի, Կարո-ից, այցելու-ի, վա-ելուչ, հմա-իչ, խաբե-ություն:

բ/ Հարցերը փոխարինի՛ր փակագծերի բառերով։

Ինչի՞ գրպանում էր տան բանալին։

Ուշ *ե՞րբ* հասանք օդանավակայան։

Որտեղո՞վ քայլելն ուղղակի հաճույք է։

Թափառող շնիկը վարժվել էր *ո՞ւմ*։

Տղան *ո՞ւմ* բարկությունից էր նեղվել։

Նորությունները *ինչի՞ց* էր իմանում։

Ամպն իր *ինչո՞վ* օղակել էր լեռան գագաթը։

(երեխա, վերարկու, ռադիո, երեկո, գոտի, ծառուղի, դասատու)

գ/ Յ ձայնակապի գրության հետ կապված առաջադրա՛նք կազմիր և առաջադրի՛ր ընկերներիդ։

- ա/Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ առ՝ նկարներն արտահայտելով բառերով, որոնք կպատասխանեն *ո՞ւմ* կամ *ինչի՞* հարցերին։

բ/Քո ընտրությամբ բառակապակցություններից մի քանիսը գործածի՛ր նախադասություններում։

գ/Փորձի՛ր մի փոքրիկ, զվարճալի պատմություն հորինել՝ գործածելով կազմածդ բառակապակցությունները։

- Անհրաժեշտ տեղում յ գրելով՝ երևակայի՛ր և պատմի՛ր երկու իրավիճակի մասին: Գործածի՛ր յ ձայնակապով բառեր:

Եթե հանդիպե-ի հրեշին, այսպես կվարվե-ի՝

Կնախատե-ի

Կմտերմանա-ի

Աշխատե՛ք զույգով: Ասացվածքներից յուրաքանչյուրում հականիշների երկու զույգ կա. մեկը տեղադրե՛ք, մյուսն ընդգծե՛ք: Ասացվածքները մեկնաբանե՛ք:

..... ունեցվածքը մի օր կպակասի, իսկ ..... կավելանա:

(ջանասեր, ծույլ)

Գիտունի խոսքը ..... է կշռում, իսկ անգետինը՝ .....:

(թեթև, ծանր)

..... ախորժակը գնալով անչափ է դառնում, ... մարդունը՝ չափավոր:

(ագահ, զուսպ)

Քաղցր խոսքը ..... է մարդուն, դառը խոսքը՝ .....:

(պաղեցնել, ջերմացնել)

..... խոսքը բարձրացնում է մարդուն, ...՝ ցածրացնում:

(տգեղ, գեղեցիկ)

..... գրպանը մի օր դատարկվում է, ...՝ լցվում:

(խնայող, վատնող)

Աշխատե՛ք խմբերով: ***Բառամասերի խառնաշփոթ:*** *Յուրաքանչյուր խումբ թող վերցնի մի տուփը և քարտերն իրար կողքի շարելով՝ բառեր կազմի: Կազմածներում թող ընտրի բառեր, որոնցով կբնութագրի հեքիաթի հերոսներից որևէ մեկին:*

1.

2.



3.



Աշխատե՛ք զույգով։ Հրեշի ու երիտասարդի հարց ու պատասխանի փոխարեն այլ հարցեր ու պատասխաննե՛ր հորինեք։

Մի տարօրինակ տղա մարդկանց տալիս է «թարս հարցեր»։ Կարո՞ղ ես այնպես պատասխանել, որ նա զարմանա։

- Ինչո՞ւ պոչն ունի ձուկ։

_____

- Ինչո՞ւ բեղերն ունեն կատու։

_____

- Ինչո՞ւ ստվերը առՃի ունի։

_____

- Ինչո՞ւ ամպերը նամակներ չեն գրում։

_____

- Ինչո՞ւ նամականիշները գարեջուր չեն խմում։

_____

- Ինչո՞ւ մորուքը դեմք ունի։

_____

(տե՛ս Ջ.Ռոդարի, «Թարս հարցեր»)

- Պատմի՛ր հեքիաթից ստացած տպավորություններիդ մասին։

Ի՞նչ լսեցի	Ի՞նչ/Ո՞ւմ տեսա	Ի՞նչ զգացի	Ի՞նչ հասկացա

Տնային հանձնարարություններ

- Շարունակի՛ր անավարտ մտքերը՝ անհրաժեշտ տեղում *յ* գրելով և գործածելով *յ* ձայնակապով այլ բառեր։

Երանի հայտնվե-ի _____

Եթե կարողանա-ի _____

Երբ հասնե-ի _____

Եթե չամաչե-ի _____

Երանի թռչե-ի _____

Երբ բարձրանա-ի _____

Նշված հղումով (https://www.bibar.am/Նվարդ-թումանյանի-հուշերը-հոր՝-հանճար/) մո՛ւտք գործիր և կարդա՛ Թումանյանի դստեր՝ Նվարդի հուշերը հոր մասին։

Նշված հղումով(http://www.reading.ge/am/books-by-level/612-Եղջերու) մո՛ւտք գործիր և տեղեկություններ՝ բաղիր եղջերուի մասին: Այլուսակում գրի՛ առ սովորածդ:

	Որտե՞ղ է ապրում	Ինչպիսի՞ արտաքին ունի	Ինչո՞վ է սնվում	Ինչո՞ւ է վախենում մարդուց

Հովի. Թումանյան, «Խոսող ձուկը»: Երկինչյունների ուղղագրությունը (յա-իա-եա)

Դիտի՛ր Թումանյանի «ալբոմը» և պատասխանի՛ր հարցերին:

Հ Թումանյանի տուն-թանգարանը Երևանում (Մոսկովյան 40)



Ներսիսյան դպրոցը, որտեղ սովորել է Թումանյանը

Թումանյանի ընտանիքը



Թումանյանը կնոջ՝ Օլգայի հետ

Թումանյանի հայրական տունը ծննդավայրում՝ Դսեղում(նորոգված)

Թումանյանի տունը Թիֆլիսում(Վերնատուն)

Թումանյանի աշխատասենյակը

1. Քանի՞ երեխա ուներ Թումանյանը:

2. Ի՞նչ էր բանաստեղծի կնոջ անունը:

3. Ինչպիսի՞ արտաքին ուներ Թումանյանը:

4. Որտե՞ղ է ծնվել ամենայն հայոց բանաստեղծը:

5. Ո՞ր դպրոցում է սովորել պատանի Թումանյանը:

6. Վրաստանի ո՞ր քաղաքում է ապրել մեծ բանաստեղծը:

7.Դ.Նալբանդյանի «Վերնատուն» կտավում ո՞ւմ ճանաչեցիր:

8. Ի՞նչ է պատմում պոետի աշխատասենյակը նրա ճաշակի մասին:

9. Երևանի ո՞ր փողոցում է գտնվում Թումանյանի տուն-թանգարանը:

- Գրավոր շարադրի՛ր, թե *ի՛նչ կանեիր, եթե՝*

  ա/ փողոցում դեմառդեմ հանդիպեիր Թումանյանին,
  բ/ փողոցի մի աննկատ անկյունից լսեիր նրա ձայնը,
  գ/ հայտնվեիր նրա տանը:

Նամակով պատմի՛ր Թումանյանին, թե ինչպիսին է այսօր մեր հայրենիքը: Նամակդ ուղարկի՛ր հետևյալ հասցեով՝



 Հարցազրո՛ւյց վարիր Թումանյանի ընտանիքի անդամներից որևէ մեկի հետ։ Նրան հարցրո՛ւ՝

- **հին ու նոր ժամանակների, դրանց լավ ու վատ կողմերի մասին,**
- **հայրենիքին օգտակար գործերի մասին,**
- **բնությունը սիրելու և պահպանելու մասին։**

Աշխատե՛ք խմբերով։ Երևակայե՛ք, թե շալակտարը դիմել է դատարան՝

ա/ բողոքելով ձկնորսից իրեն գործից ազատելու համար,

բ/ բողոքելով հրեշից դաժան պայմանի համար։

Դերաբաշխո՛ւմ արեք և ներկայացրե՛ք դատավարությունը։

Շալակտար	Ձկնորս
Շալակտարի կինը	Հրեշ
Դատավոր 1	Հրեշի դատապաշտպան
Դատավոր 2	Ձկնորսի դատապաշտպան
	Շալակտարի դատապաշտպան

- ա/Գրի՛ր, թե ինչ կխոսեին կենդանիներն իրենց վրա հրացան բռնած որսորդի հետ: Գրի՛ր մեկական նախադասությամբ:

բ/ Կենդանիներից յուրաքանչյուրը որսորդի հետ թող խոսի 3-4 նախադասությամբ:

գ/ Հորինի՛ր ու շարադրի՛ր կենդանիների և որսորդի կենդանի զրույցը:

Աշխատե՛ք զույգով։ Ի՞նչ գիտեք կենդանիների վարքի մասին. պարզե՛ք։

Երբ բակում շունն անհանգիստ հաչում է, ուրեմն _____

Հավը սկսում է աշխույժ կչկչալ, երբ _____

Մեղուները սաստիկ զայրանում են, երբ _____

Կրիան մի փոքր անգամ վտանգ է զգում թե չէ, _____

Գայլը ոռնոցով կանչում է ռիմակին, երբ _____

Օձը վրեժխնդիր է լինում, եթե _____

Ոզնին փշե կծիկ է դառնում, երբ _____

Մողեսը պոչը թողնում հեռանում է, եթե _____

Աղվեսը շատ արագ հասցնում է թաքնվել, որովհետև _____

Արջը ձմռանը կիսաքուն վիճակում լիզում է թաթը, քանի որ_____

- Փոխի՛ր հեքիաթի սյուժեն՝ ենթադրելով, թե շալակտարը չի համաձայնում հրեշի պայմանին և հրաժարվում է կովից։ Նոր շարունակություն և վերջաբա՛ն հորինիր։

- Գրի՛ր այնպիսի բառեր, որոնցում ***յա*** երկհնչյունը ածանց է։ Օրինակը կօգնի քեզ։

1.



2. Գրի՛ր բառամասեր, որոնք ***յակ***-ի հետ բառեր կկազմեն։



- Բաց թողած տեղերում լրացրո՛ւ *ի, ե կամ յ*։





- ա/ Ամբողջացրո՛ւ անձնանունները և աշխարհագրական անունները։





բ/ Մեկ անձնանուն և աշխարհագրական մեկ անուն գործածի՛ր նույն նախադասության մեջ: Այդ սկզբունքով կազմի՛ր 5 նախադասություն:

գ/ Երևակայի՛ր երազանքներիդ երկիրը և նկարագրի՛ր՝ գործածելով *յա-իա-եա* երկհնչյուններով բառեր: Անվանի՛ր այն Երազանիա կամ Լուսանիա, կամ ինչպես ինքդ կուզես:

- ա/Լրացնելով բաց թողած տառերը՝ սյունակներից ընտրի՛ր բառեր և կազմի՛ր բառակապակցություններ:

մարգարտ-ա	Մար-ամ
օվկ-անոս	դաստ-արակ
անց-ալ	պատ-ան
քրիստոն-ա	հր-ա
նվիր-ալ	ման-ակ
ուս-ալ	գործուն-ա
կր-այի	եղ-ամ
աղամանդ-ա	փիրուզ-ա

Իմացի՛ր, որ...

Եղյամը **առավոտյան բույսերի վրա նստող սառցե աստղանման բյուրեղն է:**

բ/ Մարիամ անունով մի երևակայական աղջկա մասին փոքրիկ պատմությո՛ւն հորինիր՝ գործածելով բառակապակցությունները:

գ/ Առաջադրա՛նք կազմիր *յա-իա-եա* երկհնչյունների գրության շուրջ և առաջադրի՛ր ընկերներիդ:

ա/Աշխատե՛ք խմբերով: Երկրների անունները կապե՛ք պատկերվածների հետ և հիմնավորե՛ք:

Եգիպտոս _____

Հայաստան _____

Ճապոնիա _բալենի՝_սակուրա__

Ավստրալիա _____

Ֆրանսիա _____

Իսպանիա _____

Ուշադրություն դարձրի՛ր տեղանունների գրությանը:

բ/ Համացանցից հետաքրքիր տեղեկություններ՝ քաղեք նշված խորհրդանշանների մասին և ներկայացրե՛ք աղյուսակով կամ հաղորդո՛ւմ պատրաստեք:

Նմուշ՝

Գիտեի	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Կամ՝

Միրո՞ւմ եք հետաքրքիր բաներ իմանալ աշխարհի մասին. դե ուրեմն լսե՛ք. . .

_____

_____

_____

- ա/*Յ* կգրե՞ս, թե՞ *ի*:

Հետաքրքրասեր Վիկտոր-ան ուզում է ամեն ինչ իմանալ Վիկտոր-ա ջրվեժի մասին:

Սոֆ-ան տեսնելը Սոֆ-այի վաղեմի երազանքն էր:

-Աս-ան քարտեզի վրա ցույց տալն ի՞նչ է որ, -ասաց Աս-ան:

-Սա՞ է եղ-ամը,- հարցրեց Եղ-ան՝ նայելով սառցապատ տերևներին:

բ/Անձնանուններով ու աշխարհագրական անուններով դու ևս նմանօրինակ նախադասություններ՝ կազմիր:

գ/ Անձնանունների ու աշխարհագրական անունների գործածությամբ փոքրիկ շարադրա՛նք գրիր։

- ա/Նախադասությունները դարձրո՛ւ՝

- Սա՞ էլ մեզ նման ծնող ունի։ → Պատմողական
- Ուրեմն արծիվը ճուտ էր։ → Հարցական
- Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ. . . . → Բացականչական

բ/ Դո՛ւ էլ հեքիաթից դուրս գրիր նախադասություններ և փոխի՛ր դրանց տեսակը։

գ/ Հեքիաթի հերոսները թող ասեն մտքեր՝ նույն միտքը երեք տարբեր հնչերանգներով։

Օրինակ՝

- Մի՞թե սա ինձ հետ պատահեց։
- Այո՛, սա ինձ հետ պատահեց։
- Ախր սա ինչպե՛ս պատահեց ինձ հետ։

Աշխատե՛ք զույգով: Պարզվում է՝ ասացվածքներն էլ են ունենում իրենց հոմանիշները: Որո՞նք են. միացրե՛ք և մեկնաբանե՛ք:

Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա:	Ժլատի փորը դատարկ է, գրպանը՝ լիքը:
Չին չառած՝ գոմում մի՛ կապիր:	Անբախտը ծով գնա՝ կցամաքի:
Շատ գիտես՝ քի՛չ խոսիր:	Մինչև դուռը չթակես, բացող չի լինի:
Անբախտն ինչին ձեռք տա, կչորանա:	Խելք ունես՝ քե՛զ պահիր:
Ճիշտ խոսքը դեղի պես դառն է:	Ձուկը ջրում՝ բազար չեն անի:
Ժլատը երկու անգամ է վճարում:	Դառը ճիշտը քաղցր ստից լավ է:

- Քո առջև շալակտարի տունն է: Պատին գրի՛ր՝ ա/ի՛նչ սովորեցիր հեքիաթից, բ/նրան ուղղված բարեմաղթանքներ, գ/ հրաժեշտի խոսքեր:



Բաժանվե՛ք խմբերի և խաղ-մրցո՛ւյթ անցկացրեք։ Յուրաքանչյուր խումբ թող 1-2 նախադասությամբ նկարագրի անցած հեքիաթների հերոսներին կամ ինչ-որ փաստ ներկայացնի նրա մասին(ընդգրկե՛ք նաև նախորդ տարում ընթերցածները), իսկ մյուսները թող կռահեն՝ ով է նա։

Կռահի՛ր՝ ով է նա

Օրինակ՝ **Նա մեղադրեց այգեպանին։**

Աշխատե՛ք խմբերով։ Ստվարաթղթից պատրաստե՛ք հեքիաթի հերոսներին և *ստվերների թատրո՛ն* ներկայացրեք։ Այլ հեքիաթի նկարները կօգնեն ձեզ։

Տնային պարտադիր առաջադրանքներ

- Լրացրո՛ւ աղյուսակը:

Յա-ով բառեր	Իա-ով բառեր	Եա-ով բառեր	Կազմի՛ր բառակապակցություն	Գործածի՛ր նախադասության մեջ

Հարցազրո՛ւյց վարիր ընկերներիցդ մեկի հետ *«Ի՞նչ կա հեքիաթում, որ չկա կյանքում»* թեմայով: Հարց ու պատասխանը գրի՛ առ և ներկայացրո՛ւ դասարանում:

Տնային ոչ պարտադիր առաջադրանքներ

- Շարադրա՛նք գրիր *«Երանի հեքիաթում ապրեի»* վերնագրով:

Համացանցից կամ այլ աղբյուրից տեղեկություննե՛ր քաղիր նշված *ջրվեժի, քաղաքի, աշխարհամասի* մասին:

Գիտեի	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Վիկտորիա		
Ասիա		
Սոֆիա		

Լեոնարդո դա Վինչի, «Կարապը»: Երկինչյունների ուղղագրությունը (ույ-յու, ոյ-յո-իո)

- Նկարագրե՛ք թռչուններին: Գրե՛ք նրանց ընդհանուր և տարբեր հատկանիշները: Կռահե՛ք՝ ո՛ր թռչունի մասին է զրույցը, որը կարդալու եք:



- Լուռ հետևե՛ք ուսուցչի ընթերցմանը՝ միաժամանակ դուրս գրելով ձեզ անծանոթ բառերը:

- Բարձրաձայն ընթերցի՛ր հատվածը կամ նախադասությունը, որտեղ՝

Լսում ես երգով գերվածների շշունջը:

Տեսնում ես փետուրների գեղեցկությունը:

Լսում ես ոգեշնչված երգը:

Տեսնում ես կարապի սահքը:

Զգում ես երգի մարելը:

Տեսնում ես մայրամուտի գույնը:

Զրույց-քննարկում

1. Ինչպիսի՞ն էր կարապը: Քո նկարագրածը նմա՞ն էր հեղինակի նկարագրածին:
2. Կարապն ինչ-որ բա՞ն էր ուզում փոխանցել իր երգով:
3. Ինչո՞ւ էր այդ երգը ոգեշնչված:
4. Ինչպե՞ս ես հասկանում կյանքը վերջակետելուն պատրաստ լինելը:

Աշխատե՛ք խմբերով: Աղյուսակը կհուշի, թե ի՛նչ բառեր եք դուրս գրելու տեքստից:

1-ին խումբ՝ ***Իմաստագետներ***

Բառի բացատրությունն ըստ արմատների	
Բառը	Բացատրությունը
Օր.՝ դյուրաթեք	դյուր (հեշտ) + թեք – հեշտ թեքվող

2-րդ խումբ՝ ***Երկհնչյունագետներ***

Երկհնչյուն ունեցող բառեր			
այ	յա	ույ	յու

3-րդ խումբ՝ ***Բնագետներ***

Բնությանը վերաբերող բառեր

4-րդ խումբ՝ ***Հնչյունաբաններ***

Բառեր, որոնցում հնչյունները տառերից ավելի են	Բառեր, որոնց գրությունն ու արտասանությունը տարբեր են

- Եթե կարապը խոսել իմանար, ինչի՞ մասին կերգեր: Շարադրի՛ր արձակ կամ չափածո:
- Եթե տեքստի համար պլան կազմեիր, քանի՞ կետ կգրեիր:
- Ուրիշ ինչպե՞ս կվերնագրեիր զրույցը:
- ա/Դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստով գործածված բառերը կամ նախադասությունները:

բ/Փոխաբերական իմաստով ի՞նչ կարող են անել՝

Ուռին _____

Հողը _____

Երկինքը _____

Թռչունները _____

Մայրամուտը _____

գ/ Ընտրի՛ր տարբերակներից մեկը և փոխաբերաբար գործածված բառերով նկարագրի՛ր՝

- *մայրամուտը քո պատուհանից,*
- *ծառը, որի տակ նստած ես,*
- *անձրևը, որ հանկարծակի տեղաց:*

Զրույցի օգնությամբ լրացրո՛ւ «*Բառը աշխարհ է*» աղյուսակը:

Ամենահուզիչ բառը	Ամենագեղեցիկ բառը	Ամենաերկար բառը	Ամենաջերմ բառը	Ամենազարմացնող բառը	Ամենաաղմկոտ բառը	Ամենալուռ բառը

- ա/Լրացնելով երկհնչյունները՝ բառերը գրի՛ր համապատասխան սյունակներում: 2-3 բառով շարունակի՛ր շարքերը:

իա	յա	իո	յո	ույ	յու

Արդ-ոք, զգ-շ, լռել-յն, մ-այն, մ-ուս, իսկ-ն, աշխ-ժ, վայրկ-ն, բրդ-, մետաքս-, մ-յն, մ-ասին, Մար-ամ, գործուն- , քամել-ն, կր-ա, աղ-սակ, յուրաքանչ-ր, ս-նակ, վիրաբ-ժ, աղբ-ուր, ձ-նածածկ, Անան-ա, քաղցրաբ-ր, ընտան-ք, հեք-թ, օր-րդ, միմ-անց, համբ-ր, դաշ-ն, Եղ-ա, միմ-յն, բրաբ-ն, նախօր-կ, ամբ-ն, ռադ-:

բ/Լրացրո՛ւ բաց թողած երկհնչյունները:

Աս-ական հեք-թային քաղաքում՝ օվկ-նոսի ափին, ապրում էր մի գործուն-վաճառական: Մի անգամ նա բրդ- ու մետաքս- թանկարժեք կտորեղեն գնեց և կաշվե պարկերի մեջ տեղավորեց: Հետո որոշեց մի աշխ-ժ ծառա վարձել, որը պետք է օգներ իրեն: Հանդիպեց մի հիմար մարդու, որը պատրաստ էր ծառայելու կես գնով: Եվ քանի որ ն-թապաշտ էր ու ժլատ, ուրախացավ, որ կարող է գումար խնայել և առանց վայրկ-ն անգամ կասկածելու՝ գոհ ու երջանիկ վարձեց հիմարին: «Հետո՞ ինչ, որ նա մի քիչ խելապակաս է,- ինքն իրեն համոզեց վաճառականը:- Ի՞նչ է, արդ-ք մեծ խե՞լք է պետք անզգ-շ չլինելու և ուղտեր բարձելու համար: Կարևորը՝ բ-բավոր դրամներս քամուն չեմ տա»: Այսպես միմ-նցից գոհ՝ երկուսը մ-սին ճանապարհ ընկան: ….

գ/ Շարունակի՛ր վաճառականի պատմությունը. ի՞նչ կարող էր պատահել: Գործածի՛ր երկհնչյուններով բառեր:

- ա/Լրացրո՛ւ երկհնչյունները, ապա բառերը դի՛ր իրենց ճիշտ տեղում։

ամբ-ոն

փաս-ան

օվկ-անոս

հեք-աթ

բամ-ա

քամել-ոն

ռադ-ո

կր-ա

Նապոլ-ոն

մատ-ան

բ/Փորձի՛ր երկուական բառ գործածել նույն նախադասության մեջ: Այդ սկզբունքով կազմի՛ր 5 նախադասություն։

գ/Մի ուրախ պատմությո՛ւն հորինիր *«Հեքիաթ քամելեոնի մասին»* վերնագրով։ Գործածի՛ր երկհնչյուններով բառեր։

Աշխատե՛ք զույգով։ Ո՞ր բառերին հանդիպեցիք տեքստում, և որո՞նք են նրանց հականիշները։



բ/ Հականիշների զույգերից յուրաքանչյուրը գործածի՛ր նույն նախադասության մեջ՝ բառերից մեկնումեկը փոխարինելով իր հոմանիշով։

գ/ Հոմանիշ-հականիշների գործածությամբ 2-ական նախադասությամբ լրացրո՛ւ աղյուսակը։

«Կարապը» զրույցում՝		
Ի՞նչն էր գեղեցիկ ու զարմանալի	Ի՞նչն էր իրական	Ի՞նչն էր անիրական

- Լուռ զրուցի՛ր կարապի հետ և գրի՛ առ այդ զրույցը։

Ես _____

Կարապը _____

Ես _____

Կարապը _____

Ես _____

Կարապը _____

Ես _____

Կարապը _____

- Քննարկո՛ւմ անցկացրեք «Ես բնության մասնիկն եմ» թեմայով։ Պարզե՛ք՝ ինչպես ենք վնասում մեզ, երբ վնասում ենք բնությունը։

Աշխատե՛ք խմբերով։ Ճանաչո՞ւմ եք թռչուններին։ Տեղեկություններ՝ քաղեք նրանց մասին, և թող իրենք ներկայացնեն իրենց։

Մենք. . . ենք։			Ես . . . եմ։				

Տառացանցից հանե՛ք ձայնավորների և երկհնչյունների ուղղագրության բառեր: Կարդացե՛ք բոլոր ուղղություններով, բացի անկյունագծերից:

յ	ն	ա	խ	ա	զ
մ	ի	ջ	օ	ր	ե
կ	ա	է	ր	ե	ց
ու	յ	կ	ե	ս	օ
մ	ն	ո	ր	ո	ր

Ույ երկհնչյունով 4-տառանի բառ կկարդաս, որ նշանակում է կոշիկ:

Յ-ն կգրե՞ս, թե՞ ոչ:

Ընկու-զ, աշխու-ժ, քնքու-շ, զգու-շ, անու-շ, աղ-ուսակ, կղզ-ակ, աղավն-ակ, սյուն-ակ, ձ-նաբույք, բու-րավետ, բ-ուրավոր, դաշու-նահարել, ուխտադրու-ժ, վիրաբու-ժ, հու-սառատ, առ-ուծ, յուրաքանչ-ուր, բու-ժքույր, համբ-ուրել, պայուս-ակ, աղբ-ուր, լիահու-ս, մ-ուս, քաղցրաբու-ր, մրգահ-ութ, միմ-անց:

- Գտի՛ր «մոլորված» երկհնչյունները և ճիշտ տեղում դնելով՝ շտկի՛ր բառերը։

քվիարկել օվկեանոս

ակորդիոն ռադեո

յուրաքանչյուր համբյուր

ընկյուզ շինանույթ

օրյորդ արդիոք

հեքյաթային վայրկիան

Սպիտակաձուլնիկ ճերմակաթյուր

բ/ Քո ընտրությամբ բառազույգերից մի քանիսը գործածի՛ր նույն նախադասության մեջ։

գ/ Երկհնչյուններով բառերի շուրջ հարցե՛ր ձևակերպիր և առաջադրի՛ր ընկերներիդ։

Օրինակ՝ *«Համբույր» բառն ինչպե՞ս կդարձնես գործողություն։*

Տնային պարտադիր առաջադրանքներ

ա/ Առաջադրանքնե՛ր կազմիր երկհնչյունների ուղղագրության շուրջ և ներկայացրո՛ւ դասարանում։

բ/ Լա՞վ ես հիշում ձայնավորների ուղղագրությունը. ստուգի՛ր։

Ան-գուտ, մեկ-նդմեջ, հնա-ճ, ելև-ջել, անհյուր-նկալ, վաղ-ղդայն, երկ-ևտրանք, սառն-բակ, այդ-բինակ, ժպտ-բես, գործ-նկեր, -ղբալ, գիշերուզ-ր, վայր-ջք, -ական, արծաթազ-ծ, ան-բեն, որև-, ան-բկյուղ, օրեց-ր, -նչաքաղց, երբև-, ամեն-բյա, -նդարձակ, -գևորված, երբևից-։

է, ե	օ, ո	ը

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

գ/Աշխատե՛ք խմբերով։ Համացանցից տեղեկություններ՝ հավաքեք նշվածների մասին և ներկայացրե՛ք դասարանում։

Ո՞վ է/ Ի՞նչ է	Կարդացի, որ …	Իմացա, որ …
Նապոլեոն Բոնապարտ		
Անանիա Շիրակացի		
Բրաբիոն		

բ/Հանդե՛ս եկեք որպես լրագրողներ և հարցազրո՛ւյց վերցրեք Նապոլեոնից կամ Շիրակացուց։ Հարց ու պատասխանը գրի՛ առեք և ընթերցե՛ք դասարանում։

Ղ. Աղայան, «Եղեգնուհին», I, II մասեր: Բ-պ-փ-ի ուղղագրությունը

Հովի. Թումանյանն ու Ղ. Աղայանը մտերիմ ընկերներ էին:

«Մեր տան թամադան Աղայանն էր,- պատմում է Նվարդ Թումանյանը: - Հայրիկի կենացին միշտ երգում էր «Քյորօղլին», հետո գրկախառնվում էին.... Սպիտակ անձեռոցիկ էին փռում կրծքերին ու ախորժակով, զվարթ ճաշում....»:

- 4-5 նախադասությամբ շարունակի՛ր. ի՞նչ հրաշք կարող է կատարվել:

Ծեր ճահճի ափին ապրում էր մի ջահել եղեգ: .....

- Ի՞նչ անուն կտաս հեքիաթի հրաշքով այս բույսերից ծնված հերոս/ուհի/ներին:

- Ի՞նչ հեքիաթներ ես հիշում, որոնցում հերոսները մի բանից փոխակերպվել ու մարդ են դարձել:

Աշխատե՛ք զույգով: Հեքիաթի 1-ին մասը լուռ ընթերցելուց հետո մեկբառանի պատասխան ակնկալող հարցե՛ր ձևակերպեք միմյանց ստուգելու համար: Նույնն արե՛ք 2-րդ մասի ընթերցումից հետո:

Օրինակ՝ *Հարց՝ Թագավորի որդու ինչի՞ ժամանակն էր:*

Պատասխան՝ ամուսնանալու

Բաժանվե՛ք խմբերի: Փորձե՛ք կռահել՝ ինչպե՛ս կշարունակվի հեքիաթը: Տարբերակները գրե՛ք և փակցրե՛ք գրատախտակին: Կհաղթի այն խումբը, որն ավելի մոտ կռահում կանի:

- Յուրաքանչյուրդ 3-ական բա՛ռ վերցրեք և «զրուցող» բառարա՛ն կազմեք: Օրինակը կօգնի ձեզ:

Նորածանոթ բառը	Բացատրությունը	Գործածությունը հեքիաթում	Այլ գործածություն
Ես «աղախին» բառն եմ:	Ես նշանակում եմ «կին ծառա»:	Ապրում եմ այստեղ՝ «Ես աղախիններ կուղարկեմ»:	Կապրեմ նաև այստեղ՝ «Թագուհին երկու աղախին ուներ»:

- Է՞լ ինչ կարող էր ասել խափշիկը, որպեսզի սուտը համոզիչ լիներ: Երեք տարբերա՛կ առաջարկիր:



- ա/Շրջաններում գրի՛ր նկարագրող բառեր: Կա՞ն ընդհանուր հատկանիշներ, որոնք կարելի է գրել հատվող տեղում: Եթե ոչ, ներկի՛ր:



բ/Կապակցված խոսքով նկարագրի՛ր խափշիկին ու Եղեգնուհուն:

գ/ Հորինի՛ր երկխոսություն-վեճ Եղեգնուհու և խափշիկի միջև:

- Համաձա՞յն ես պնդումների հետ: Եթե ոչ, շտկի՛ր:

Թագավորի տղան կամուսնանար ում հետ պատահեր։

Թագավորը մի անծանոթ պառավից խորհուրդ հարցրեց։

Եղեգնուհին շքեղ հագուստով դուրս եկավ ջրից։

Ծառն այնպես այրվեց, որ ոչ մի շյուղ չմնաց։

Ձկնորսները մի սովորական ձուկ հանեցին։

Խափշիկը Եղեգնուհու նման չքնաղ էր։

Նաժիշտները կերան ձկան բոլոր փշերը։

- Հեքիաթի 1-ին երկու մասերից դո՛ւրս գրիր այն նախադասությունները, որոնք պատմում են կատարված հրաշքների մասին։

Մաս	Կատարված հրաշքները
1-ին մաս	
2-րդ մաս	

- Ծառն ու ձուկը «զարդարի՛ր» այնպիսի հատկանիշներով, որ նմանվեն հեքիաթում եղածներին: Եթե կարող ես, նկարի՛ր և վրաները գրի՛ր:





- Հեքիաթում հանդիպեցիր փոխակերպումների: Փորձի՛ր փոխակերպման շղթա կազմել՝ գրելով ինչը ինչ կամ ով դարձավ: Եթե կարող ես, նաև նկարի՛ր:



Աշխատե՛ք զույգով: Հեքիաթի 1-ին երկու մասերում ի՞նչը ձեզ զարմացրեց, ուրախացրեց կամ տխրեցրեց:

	Զարմացա	Ուրախացա	Տխրեցի
Ե՞րբ և ինչո՞ւ			

- Խափշիկը խաբեց թագավորին: Լրացնելով *բ* կամ *պ*՝ գրի՛ր, թե ինչ կարող են անել՝

Հար-ած Հակո-ը _____

Ուր-աթախոս Սերո-ը _____

Համ-երատար Հայար-ին _____

Ար-իարի եղ-այրը _____

Դար-ին Գա-րիելը _____

Հուսախա- Ար-ին _____

- ա/Բաց թողած տեղերում լրացրո՛ւ ***բ, պ*** կամ ***փ***։

Եր-եմն, հար-ել, եր-ներանգ, որ-անոց, փր-ուր, սր-իչ, համ-երել, շա-աթօրյակ, ի-րև, եր-նէ, ճամ-ա, երկուշա-թի, խա-եբա, աղ-յուր, ամ-ամած, խուսա-ել, նր-ություն, ի-ր, հինգշա-թի, ե-բայր, ա-սոսանք, ս-ռոց, ամ-ոփել, համ-ույր, պատշգամ-, խա-եություն, եր-եք, փամ-ուշտ, աղ-արկդ, պա-ակ, փա-ագ, սարսա-ելի, ող-ալի, ճամ-բուկ, դար-ին։

բ/Բառաշարքից ընտրի՛ր 6 բառ և կազմի՛ր բառակապակցություններ։

գ/ Մի փոքրիկ, զվարճալի պատմությո՛ւն հորինիր *«Ճամպրուկը»* վերնագրով՝ գործածելով բ-պ-փ-ի ուղղագրության բառերը։

- ա/Նախ լրացրո՛ւ տառերը, ապա բառամասերը միացնելով՝ ստացի՛ր գծիկով գրվող բառեր։



բ/Գծիկով գրվող բառերով կազմի՛ր փոխաբերական իմաստով բառակապակցություններ։

գ/ Փոխաբերական իմաստով բառակապակցությունների գործածությամբ գրի՛ր նկարագրական փոքրիկ տեքստ։

Աշխատե՛ք զույգով։

ա/Ի՞նչ բառակապակցություններ կկազմեք՝ լրացնելով ***բ, պ*** կամ ***փ*** և պատկերներն արտահայտելով բառերով։

բ/Բառակապակցություններից հինգը գործածե՛ք նախադասություններում։

գ/Բառակապակցություններից մի քանիսի գործածությամբ կազմե՛ք թելադրության փոքրիկ տեքստ և առաջադրե՛ք ընկերներին։

Բաժանվե՛ք խմբերի և խաղացե՛ք «Ցո՛ւյց տուր՝ ասեմ» խաղը: Մնջախաղով բացատրե՛ք բ-պ-փ-ի ուղղագրության բառը: Եթե դիմացինը չկարողանա կռահել, օգնության 3 հնարավորությո՛ւն տվեք:

Օգնություն 1-ին՝ ***Ասե՛ք բառի տառերից մեկը:***

Օգնություն 2-րդ՝ ***Ասե՛ք բառի վերջին տառը:***

Օգնություն 3-րդ՝ ***Ասե՛ք բառի առաջին տառը:***

- ա/Լրացրո՛ւ աղյուսակը: Օրինակը կօգնի քեզ:

Ո՞վ է/Ինչպիսի՞ն է	Գրի՛ր մեկ բառով
քիչ խոսող	ուրբաթախոս
ջրով արբեցած	
քարից կոփված	
նուրբ իրան ունեցող	
հույսի մեջ խաբված	
թմբուկ նվագող	
շեփոր նվագող	

Աշխատե՛ք զույգով:

ա/Բառամասերի խառնաշփոթ է: Միացրե՛ք և բառե՛ր կազմեք:

բ/Կազմածներից ընտրելով համապատասխան բառերը՝

1. Գովա՛զդ պատրաստեք, ասենք, «Կաթնաղբյուր» հանգստյան գոտու մասին:

2. Հաղորդո՛ւմ պատրաստեք բնությունը մաքուր պահելու մասին:

3. Հաղորդո՛ւմ պատրաստեք հանցագործ Կայենի մասին:

4. Նկարագրե՛ք ձեր ծանոթներից մեկին:

- Փոքրիկ օրագի՛ր շարադրիր. ինչպե՞ս անցկացրիր անցած ***երեքշաբթին***, ***հինգշաբթին*** և ***շաբաթը***: Հուշումները չեն պարտադրում:

Երեքշաբթին հետաքրքիր անցավ...

Հինգշաբթի հանդիպեցի...

Շաբաթը անակնկալ էր պատրաստել...

Տնային պարտադիր առաջադրանքներ

- ա/Լրացրո՛ւ **բ, պ** կամ **փ** և գրի՛ր համապատասխան այունակում:

Ամ-շող, անհամ-եր, ինքնամ-ոփ, հար-ել, եր-նագույն, ար-իափայլ, բարեհամ-ույր, ճամ-բուկային, շա-աթօրյակ, Հակո-յան, ա-սեաձև, ի-րև թե, սր-ություն, չորեքշա-թի, եղ-այրասեր, ող-ասաց, փա-ազել, նր-իրան, սր-ավայր, ս-րթնել, ալեծու-, շամ-ուր, Գա-րիելյան, խա-եբայություն, խա-շիկ, դար-նոց, եր-եմն, ա-շեցուցիչ, եր-եք, եր-նէ:

Բ	Պ	Փ

բ/ Հարցե՛ր ձևակերպիր դասընկերներիդ առաջադրելու համար՝

- «Եղեգնուհին» հեքիաթի շուրջ (առնվազն 5 հարց),
- բ-պ-փ-ի ուղղագրության շուրջ (առնվազն 7 հարց)։

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

- Ինչպե՞ս եք պատկերացնում Թումանյանի և Աղայանի մտերմությունը։ Դրվա՛գներ հորինեք, ապա ընթերցե՛ք նրանց զավակների՝ Նվարդի և Մուշեղի հուշերը և համեմատե՛ք։

Կարող եք այս հղումով /https://www.vnews.am/culture/hovhannes-tumanyani-amenamterim-ynkery/կարդալ Մուշեղ Աղայանի գրառումը հոր և Թումանյանի ընկերական կապի մասին։

«Եղեգնուհին», III, IV մասեր

- Կազմե՛ք հեքիաթի 3-րդ և 4-րդ մասերի «զրուցող» բառարանը:

Նորածանոթ բառը	Բացատրությունը	Գործածությունը հեքիաթում	Այլ գործածություն
Ես «աղախին» բառն եմ:	Ես նշանակում եմ «կին ծառա»:	Ապրում եմ այստեղ՝ «Ես աղախիններ կուղարկեմ»:	Կապրեմ նաև այստեղ՝ «Թագուհին երկու աղախին ուներ»:

- Վերաշարադրե՛ք հեքիաթի բովանդակությունը դերախաղով: Ավելացրե՛ք գործող հերոսների քանակը: Նրանք կարող են լինել՝

Նաժիշտ 1 *Չկնորս 1* *Խոսող ձուկ*

Նաժիշտ 2 *Չկնորս 2* *Խոսող ծառ* *և այլն:*

- Ի՞նչ կանեիր, եթե հեքիաթում հայտնվեիր՝

Եղեգնուհուն խեղդելու պահին,
ձկանը մորթելու հրամանն արձակելու պահին,
ծառն այրելու հրամանն արձակելու պահին,
խափշիկի պատժի որոշումն ընդունելու պահին:

Բաժանվե՛ք խմբերի և վիճաբանե՛ք հեքիաթում կատարվածի պատճառների և հետևանքների շուրջ։



Աշխատե՛ք զույգով։ Հեքիաթի յուրաքանչյուր հատվածից դո՛ւրս գրեք՝

Ամենազեղեցիկ բառը	Ամենահետաքրքիր բառը	«Ամենածեր» բառը	«Ամենաբարի» բառը	«Ամենաչար» բառը	«Ամենատխուր» բառը

- ա/Փոխի՛ր նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի։

- Այս ի՞նչ լավ խուփ է։

Պատմողական

- Լա՛վ, դու կարող ես տուն գնալ։

Հարցական

- Ա՛յ պառավ, պետք է ինձ ուղիղն ասես։

Հրամայական

- Միրո՛ւն աղջիկ, քեզ հետ խոսելուց չենք կշտանում։

Բացականչական

բ/ Ի՛նքդ ընտրիր 3-4 նախադասություն և փոխի՛ր ըստ հաղորդակցման նպատակի։

գ/ Երկխոսությո՛ւն հորինիր խափշիկի և Եղեգնուհու միջև։

Աշխատե՛ք զույգով։

ա/Ինչպե՞ս կմեկնաբանեք մտքերը։ Յուրաքանչյուրի դիմաց մեկ նախադասությո՛ւն գրեք։

- Ուզում եմ բախտս փորձել։
- Երեսից լույս է թափվում։
- Ուզում է իմ տեղը բռնել։
- Կարծես ձեռք դիպած չլինի։
- Բերանից մարգարիտ է թափվում։
- Ամենքն էլ աչք ու ականջ դարձան։
- Երեսին վարդ ու մանուշակ էր փռվում։

բ/Կարմրաներկ բառերը փոխելով՝ այլ դարձվածքներով մտքե՛ր ստացիր։

Օրինակ՝ *Ամենքն էլ մի բռունցք դարձան։*

Բաժանվե՛ք խմբերի։ Անցած բոլոր հեքիաթների հերոսների մասին հարցե՛ր գրեք և զցե՛ք «Բախտի արկղը»։ Հարցը վերցնողը պիտի ասի՝ բախտը բերե՞լ է, թե՞ ոչ։

Բախտը բերում է, երբ՝

Կարողանում է կռահել՝ որ հերոսն է,

Լավ ու բարի հերոս է բաժին ընկնում։

Բախտը չի բերում, երբ՝

չի կռահում՝ որ հերոսն է,

չար հերոս է բաժին ընկնում։

- ա/Անգույն խճանկարներին կից գունավորների հոմանիշներն են. որո՞նք կմիացնես:



բ/ Գրի՛ր հոմանշային զույգերի հականիշները և սրանց զույգերից էլ երեքը փորձի՛ր գործածել միևնույն նախադասություններում:

գ/ Եղեգնուհուն և խափշիկին նկարագրի՛ր այնպիսի բառերով, որոնք կշտկվեն իրենց հականիշներով:

Օրինակ՝ Եղեգնուհին խորամանկ էր:

միամիտ

Ամփոփիչ զրույց-քննարկում

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր թագավորի տղան ոչ հողեղեն աղջիկ ուզում:

2. Ինչո՞ւ ծերունին խորհուրդ տվեց չբանեցրած դանակով կտրել եղեգը:

3. Ի՞նչ խորհուրդ ունի սևը հեքիաթում: Ո՞ր հատվածն ի՞նչ գույն ունի:

4. Դու է՞լ այդպես կպատժեիր խափշիկին:

5. Կարելի՞ էր ներել նրան:

Տնային պարտադիր առաջադրանք

- Մի փոքրիկ հեքիա՛թ հորինիր՝ գործածելով բ-պ-փ-ի ուղղագրության բառեր: Դրանք գրի՛ր գունավոր գրիչով:

Նկարազարդի՛ր հորինածդ հեքիաթը:

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

- Հորինի՛ր Եղեգնուհու մենախոսությունը: Թող «նրա բերանից մարգարիտներ թափվեն»:

Հանս Քրիստիան Անդերսեն, «Սոխակը»: Գ-կ-ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

- ա/Լսե՞լ ես, թե ինչպես են երգում թռչունները: Ինչպիսի՞ն է նրանց երգը: Նոնների քանակով բնութագրող բառե՛ր գրիր:

բ/Նկարագրի՛ր՝ ինչ ես տեսնում: Կուզեի՞ր՝ ձեր բակում այսպիսի տեսարան լիներ:

- Հեքիաթում, որը կարդալու ես, դեպքերը կատարվում են մի երկրում, որի անունն ի՛նքդ կասես՝ նայելով և մեկնաբանելով նկարները:



- Հատվածաբար ընթերցե՛ք հեքիաթը՝ բացատրելով անծանոթ բառերը։
- Կպչուն թղթերին գրված բառերով, որոնցից մեկը պետք է լինի նոր սովորածներից, դոմինոյի էֆեկտով նախադասությո՛ւն կազմեք։

Օրինակ՝

- Հեքիաթը բաժանե՛ք ավելի փոքր մասերի և վերնագրե՛ք։

Բաժանվե՛ք խմբերի և միմյանց առաջադրելու համար ձևակերպե՛ք՝

խումբ I – հարցեր հեքիաթի բովանդակության շուրջ,

խումբ II – սխալ պնդումներ հեքիաթում կատարվածի մասին,

խումբ III – նկարագրությամբ հեքիաթի հերոսի կռահում։

Աշխատե՛ք զույգով։ Վենի տրամագրի օգնությամբ համեմատե՛ք իսկական և արհեստական սոխակներին։



- Բանավե՛ճ հորինիր, որի մասնակիցները կլինեն երկու սոխակները, թագավորը, բժիշկն ու ժամագործը, ինչպես նաև դու՝ որպես ընթերցող։ Թեման ի՛նքդ ընտրիր։

Ես _____

_____

_____

Ես _____

_____

_____

_____

Ես _____

2-3 նախադասությամբ գրի՛ր, թե բանավեճի արդյունքում ինչ եզրահանգման եկար։

- ա/Համեմատի՛ր արհեստական ու բնական իրերը և ասա՛, թե որը որ դեպքում է նախընտրելի։

Բնական	Արհեստական

բ/ Նմանություն տեսնո՞ւմ ես *երգեհոնի ու «քարերի սիմֆոնիայի»* միջև։ Նկարագրելով համեմատի՛ր։

գ/Օտարազգի զբոսաշրջիկների համար գովա՛զդ պատրաստիր «քարերի սիմֆոնիայի» մասին։

- Պատկերացրո՛ւ, թե սոխակի երգի համար քեզ պատվիրել են բառեր գրել։ Արձակ կամ չափածո հորինի՛ր և մի երկու բառ տեղադրի՛ր նոտաների տակ։



Բաժանվե՛ք խմբերի և մրցո՛ւյթ անցկացրեք. սահմանված ժամանակում ո՞ր խումբը **գ-կ-ք**-ի ուղղագրության ավելի շատ բառ դուրս կգրի, նաև կավելացնի բառացանկը։ Հաղթող խմբի աթոռները կհամարվեն գահեր, իրենք՝ արքաներ, և կարող են ցանկացած հրաման արձակել, որ պարտավոր են կատարել պարտված խմբերը։

- Կռահի՛ր բառը և ճի՛շտ գրիր։

..... ու մեղր	**էսօր- .....**	**արևի .....**
եզակի և	**.....- զարդարվել**	**նվեր է և անուն.....**
..... ու կանոն	**.....- պատիվ**	**Մոխրոտի տրանսպորտը**
..... գծել	**գիրքը հայերեն .....**	**վերարկուն .....**

- Առած-ասացվածքներում գ-կ-ք-ի ուղղագրության ո՞ր բառերը կտեղադրես։

..... նստի, մորուքդ փետի:

Մի՛ եղիր ..... պես՝ միշտ դեպի քեզ...:

Էսօրվա գործը ..... չեն թողնի:

Անհոգ գլուխդ մի՛ դիր ..... տակ:

Արջը ..... շատ սիրելուց խեղդել է:

Հարուստի ..... նոր շոր են տեսնում, ասում են՝

շնորհավոր, աղքատին՝ էս որտեղից:

Մինչև հարուստը բարակի, աղքատի ..... դուրս կգա:

Անամոթ մարդու երեսին ....., ասաց՝ անձրև է գալիս:

- Ենթադրի՛ր՝ մեծ փաթեթով նվեր ես ստացել, սակայն բացել ես, և սրտովդ չէ։ Պատմի՛ր, թե ինչպիսի պահվածք կդրսևորես։ Խոսքիդ մեջ գործածի՛ր գ-կ-ք-ի ուղղագրության բառեր։

- Հեքիաթի փոքր մասերից հանի՛ր մեկական նախադասություն այնպես, որ միացնելով ստացվի համառոտ բովանդակությունը։

- Ի՞նչը քեզ զարմանալի, տարօրինակ կամ գեղեցիկ թվաց: Գրի՛ր աղյուսակում:

Զարմանալի էր	Գեղեցիկ էր	Տարօրինակ էր

- Երևակայի՛ր, թե թագավորը սոխակներից մեկին պալատում պահելու համար պահանջել է նրանց ինքնակենսագրությունը: Օգնի՛ր, որ լրացնեն:

Ինքնակենսագրություն

Ես _____

Ծնվել եմ _____

Սովորել եմ_____

Մասնագիտությունս_____

Բնավորությունս _____

Հուզել եմ_____

Ինչո՞ւ եմ ուզում ապրել պալատում:

_____

Ես _____

Պատրաստվել եմ _____

Սովորեցրել են_____

Կարողանում եմ_____

Բնավորությունս_____

Հիացրել եմ_____

Ինչո՞ւ եմ ուզում աշխատել պալատում:

_____

Տնային պարտադիր առաջադրանք

- Գ-կ-ք-ի ուղղագրության շուրջ առաջադրա՛նք կազմիր ընկերներիդ առաջադրելու համար։

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

Այս երգչուհուն իր գեղեցիկ ձայնի համար կոչել են «Հայաստանի սոխակ»։ Համացանցում(https://www.vnews.am/culture/gohar-gasparyani-serery/)

կարդա՛ նրա մասին, գրառումնե՛ր կատարիր և ներկայացրո՛ւ ընկերներիդ։

Էդ. Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը»: Դ-տ-թ-ի ուղղագրությունը

- Քննարկե՛ք, թե իրերից յուրաքանչյուրն ինչպես կարող է օգուտ կամ վնաս տալ: Փորձե՛ք այլ օրինակներ ևս մտաբերել: Կռահե՛ք՝ ինչի մասին է տեքստը, որը կարդալու եք:

- Շղթայաձև կամ դերային ընթերցո՛ւմ կատարեք:

- Բառարանում գտե՛ք անծանոթ բառերի բացատրությունը և սովորե՛ք՝ իրար հարցնելով: Կիրառե՛ք դրանք նոր նախադասություններում:

- Կարդալու ընթացքում նշե՛ք հերոսներին, որոնց հանդիպեցիք: Ովքե՞ր էին նրանք. թվարկե՛ք:

Բաժանվե՛ք խմբերի և խաղացե՛ք «Մատդ դի՛ր տողին» խաղը: Վիճակատուփից հանե՛ք բառաքարտեր, բառերից կռահե՛ք, թե խոսքն ում կամ ինչի մասին է, և հիմնավորե՛ք համապատասխան տողերով:

Բառերը կարող են լինել՝



- Հետևյալ մտքերի շուրջ քննարկո՛ւմ անցկացրեք: Է՞լ ինչ կարևոր մտքեր դուրս կբերեք:

Այդպիսի արդուկ ով էլ ունենա, խելքը կկորցնի:

Ո՞ր չարն է պատժվել, որ սա պատժվի:

Առհասարակ ամեն ինչ տափակ եմ սիրում:

Բաժանվե՛ք խմբերի: Ենթադրե՛ք, թե 911-ի փրկարար ջոկատ եք, ահազանգ եք ստացել: Ինչպե՞ս կկանգնեցնեք աղետը. գրե՛ք աղյուսակում:

	Ինչպե՞ս ենք փրկելու
ՓՋ 1 Փրկել կենդանիներին	
ՓՋ 2 Փրկել սարերն ու բլուրները	
ՓՋ 3 Փրկել ծովը	

Աշխատե՛ք զույգով: Նկարների հուշումով ***գլուխ*** բառը գործածե՛ք տարբեր իմաստներով:



բ/ ***Աչք*** բառը ևս տարբեր իմաստներով գործածե՛ք նախադասություններում:

գ/ 5-6 նախադասությունից կազմված երևակայական շարադրա՛նք հորինեք՝ «Իմ տունը նման է աչքի» վերնագրով։

- ա/«Աստղաթափից» հավաքի՛ր կապույտ «աստղաբառերի» հոմանիշներն ու հականիշները։

Բառը	Հոմանիշը	Հականիշը

բ/Հականիշների զույգերից երկուսը գործածի՛ր նույն նախադասություններում։

գ/Բնավորությունդ չո՞ր է, թե՞ փափուկ։ 4-5 նախադասությամբ պատմի՛ր՝ գործածելով հականիշներ։

- Բառերը գործածի՛ր նախադասություններում այնպես, որ՝



Աշխատե՛ք զույգով։ Հիշե՛ք և գրե՛ք բառեր, որոնցում կան հետևյալ տառակապակցությունները՝

րթ _____

_____

րդ _____

_____

նդ _____

_____

- Արևի ճառագայթներին գրի՛ր տառեր, որ բառեր ստացվեն։ Բառերից մեկը ժողովրդախոսակցական է։



- Ծաղկաթերթերին գրի՛ր այնպիսի բառեր, որոնք ***որդ***-ի և ***ուրդ***-ի հետ նոր բառեր կկազմեն։



- Դատարկ պատկերներում գրի՛ր այնպիսի բառամասեր, որոնք ***ընդ***-ի հետ բառեր կկազմեն։



- ա/Ո՞ր բառերի մասին են հուշում նկարների զույգերը։ Գրի՛ր ճիշտ ուղղագրությամբ։

_____

_____

_____

_____

բ/Վերևում գրածդ բառերը գործածի՛ր նախադասություններում: Փորձի՛ր գործածել երկուսը մեկում:

գ/ Փորձի՛ր բառախաղով արձակ կամ չափածո փոքրիկ տեքստ հորինել՝ գործածելով վերևում գրածդ բառերը:

- ա/Լրացնելով տառերը՝ բառերից յուրաքանչյուրը գրի՛ր իր «հարազատ» շարքում:

Ար-ար, մեկը-մեջ, կր-սեր, փար-ամ, ար-նանալ, վար-, նյար-ային, հար-ավայր,

ար-յունք, այ-պիսի, ժպ-երես, սաղար-, ար-են, մար-կային, պա-շար, անը-հատ, լյար-,

հեր-ապահ, բեր-ապահ, բար-, բր-ուճ, , անը-ունակ, եր-ուղի, մայ-եզր, ը-արձակ, խն-իր:

Դ	Տ	Թ

բ/ 3-5 բառով լրացրո՛ւ յուրաքանչյուր շարքը:

ա/Նկարիչն ինչպե՞ս, ի՞նչ գույներով կվերստեղծեր բնությունը: Փորձի՛ր պատկերել:

բ/Ի՞նչ ես կարծում, է՞լ ով կարող էր վերստեղծել բնությունը:

Աշխատե՛ք զույգով: Հեքիաթից դո՛ւրս գրեք՝

Ամենազայրացնող միտքը	Ամենազարմացնող միտքը	Ամենաանհեթեթ միտքը	Ամենախելացի միտքը	Ամենահուսադրող միտքը	Բանալի միտքը

Տնային պարտադիր առաջադրանքներ

- Դ-տ-թ-ի ուղղագրության շուրջ առաջադրա՛նք կազմիր՝ «Ուղղի՛ր իմ սխալները», որ ընկերներդ կատարեն։

Բաժանվե՛ք խմբերի և պատրաստվե՛ք հեքիաթը բեմադրելու։ Նախ ընտրե՛ք տեքստը բեմագրի(սցենարի) վերածողներին, ապա դերաբաշխո՛ւմ կատարեք և հաջորդ դասաժամի համար պատրաստվե՛ք դերախաղի մրցույթի։

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

- Համացանցում կարդա՛ խաղողի որթի և Հարդագողի ճանապարհի մասին առասպելները և սովորածդ ներկայացրո՛ւ աղյուսակով։

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Խաղողի որթ		
Հարդագողի ճանապարհը		

Ավ. Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»: Ձ-ծ-ց և ջ-ճ-չ բաղաձայնների ուղղագրությունը

Նրանք ամենալավ ընկերներն էին...

Պատմում է Ավ. Իսահակյանը

Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով՝ շաբաթը մեկ-երկու անգամ, հավաքվում էինք նրա մոտ՝ իրար տեսնելու և զրույց անելու: Այսպիսով նրա տունը դարձել էր մեր հավաքատեղին: Թեյ էինք խմում, ընթրում, խոսում: Ձմեռը վառվռուն բուխարիկի շուրջը նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում:....

- ա/Նայե՛ք լուսանկարներին, ճանաչե՛ք զրողներին:

բ/Կարդացե՛ք հուշի պատառիկը և կռահե՛ք՝ ում տանն էին նրանք հավաքվում։ Ի՞նչ եք կարծում, ինչի՞ մասին կարող էին զրուցել։

գ/Բաժանվե՛ք խմբերի։ Հանդե՛ս եկեք զրողների դերում և զրույցի տեսարա՛ն բեմադրեք։

Քննարկե՛ք։

1. Ի՞նչ արարքներ պիտի գործի մարդը, որ խելացի համարես նրան։

2. Դու քեզ խելացի համարո՞ւմ ես։ Պատասխանդ հիմնավորի՛ր։

3. Դո՞ւ ինչ արարքներ ես գործել։ Պատմի՛ր դրանցից ամենատպավորիչի մասին։

4. Աղյուսակում գրի՛ր երկուական խելամիտ և անհեթեթ մտքեր, որ կարող են ծագել մարդու գլխում։

	Խելամիտ	Անհեթեթ
Միտք		

5. Երբ դժվարլուծելի խնդիր ես ունենում, ո՞ւմ ես դիմում։ Դեպքե՛ր հիշիր։

Բաժանվե՛ք խմբերի։ Հեքիաթը բաժանե՛ք մասերի, դերաբաշխո՛ւմ կատարեք և ընթերցե՛ք դերերով։

- Առաջին շարքի իրերին հանդիպեցիր հեքիաթում։ Անվանի՛ր դրանք և համեմատությո՛ւն անցկացրու մյուս շարքի հետ։

	Անվանի՛ր		Անվանի՛ր

Բաժանվե՛ք խմբերի: Հանդե՛ս եկեք որպես լրագրողներ և հեքիաթի տարբեր հերոսներ: Լրագրողները թող հարցեր ձևակերպեն, հերոսները՝ դրանց պատասխանները: Յուրաքանչյուր խումբ թող ներկայացնի իր հարց ու պատասխանը:

- Մտովի հայտնվի՛ր տարբեր աշխարհներում, որտեղ՝

Միշտ շոգ է: _____

Միշտ քամի է: _____

Անդադար անձրևում է: _____

Կլոր տարին սառնամանիք է: _____

Ինչպե՞ս կվարվես յուրաքանչյուր դեպքում։ Գրի՛ր մեկական նախադասությամբ։ Առաջարկվող տարբերակները կօգնեն քեզ՝ այլ տարբերակներ ևս մտածելու։

- Առավոտից երեկո կտրտնջամ։
- Կփոխեմ բնակավայրս։
- Տնից դուրս չեմ գա։ …

Աշխատե՛ք զույգով։ Ձեզնից մեկը թող մեղադրի, մյուսն արդարացնի։

Ո՞ւմ	Մեղադրի՛ր	Արդարացրո՛ւ
Նուկիմի խելոքներին		
Ճամփորդին		
Թագավորին		

Աշխատե՛ք խմբերով։ Նուկիմի խելոքների կողովը լցրե՛ք պահանջվող բառերով։

1-ին՝ **Ուղղագրագետների խումբ**

- Հեքիաթից դո՛ւրս գրեք ***դ-տ-թ, ձ-ծ-ց և ջ-ճ-չ*** բաղաձայններ ունեցող բառեր։



2-րդ՝ **Դարձվածքագետների խումբ**

- Հեքիաթից դո՛ւրս գրեք դարձվածքները և բացատրե՛ք։

3-րդ՝ **Բառագետների խումբ**

- Հեքիաթում գտե՛ք տրված բառերի հականիշները։



- ա/Լրացրո՛ւ **ձ, ծ** կամ **ց**։

Հար-ակում, հար-նել, դաղ-, դար-յալ, ուր-, հանդիպակա-, ծա-կագիր, կոր-նել, դեր-ակ, դեղ-ենի, օ-աձև, վեր-նել, ձվա-եղ, վար-ավճար, ձյունածա-կ, խ-կել, կ-կել, հեքիաթասա-, դեղ-ան, փոր-նական, գնա-ք, թխվա-ք, հինավուր-, լու-ույթ, լու-կի, բար-բանալ, ար-ակուրդ, ասացվա-ք, ար-ունք, բար-ունք, մր-ույթ, դեր-ան, բար-, հար-ուփոր-, օ-աձուկ, ընդար-ակ, Համբար-ում, հանդեր-անք, վերադար-, խուր-։

բ/Բառերից երկուսը գործածի՛ր նույն նախադասության մեջ: Այս սկզբունքով կազմի՛ր երեք նախադասություն:

գ/ Բառերից երեքը և ավելին գործածի՛ր նույն նախադասության մեջ: Այս սկզբունքով կազմի՛ր 3-4 նախադասություն:

Օրինակ՝ Դեր-ակը դեղ-ան դեր-ան ունի:

Աշխատե՛ք զույգով: Դատարկ շրջաններում գրե՛ք բառամասեր, որոնք տրվածների հետ նոր բառեր կկազմեն: Գրի՛ առեք կազմածներդ:





- Ընտրելով վերնագրերից մեկը՝ հումորային մի հեքիաթ էլ ի՛նքդ հորինիր.

  - «Քչակերներից քչակերը»
  - «Գիտուններից գիտունը»
  - «Ուժեղներից ուժեղը»

- ա/Հեքիաթը բեմագրի (սցենարի) վերածելիս քանի՞ մասի կբաժանես։ Վերնագրի՛ր մասերը։

բ/ Գործողություններին քանի՞ հերոսի մասնակից կդարձնես։ Գրի՛ր նրանց անունները։

գ/ Հեքիաթի վերջաբանը ներկայացրո՛ւ երկու տարբերակով՝ հեղինակինը և քո հորինածը։

- Մի գրավիչ հաղորդագրությո՛ւն ուղարկիր կարդացածդ հեքիաթների հերոսներին, որ շտապ ժամանեն Նուկիմ քաղաք: 5-6 նախադասությամբ գրի՛ր ամենակարևորի մասին:

- Լրացրո՛ւ ջ, ճ կամ չ և ասա՛, թե ինչ օրինաչափություն նկատեցիր:

Աղ-կա առա-ին վայրէ-քն էր:

Ար-ի որ-ը թր-վել էր:

Կտրի-ը կո-կեց բա-կոնը:

Մր-յունը որ-ի առ-և էր:

Հիասքան- թռ-ունն անճանա-ելի էր:

Խր-իթում խռ-կոր կար, մի քիչ էլ՝ ալռ- :

Առա-ինն էր ող-ունել աղ-իկներին:

Զղ-ացել էր, որ զի-ել էր:

Քա- մր-յունը վեր-ինն առա-ացավ:

Մին- այդ էլ դար-ինն էին զեղ-ել:

- Լրացրո՛ւ բաց թողած տառերը և առնվազն 5 բառով շարունակի՛ր շարքերը։

լայնար-ակ, _____

հար-ական, _____

ծա-կել, _____

ի-նել, _____

դար-ին, _____

խո-կոր, _____

- Հարստացրո՛ւ գիտելիքներդ և ներկայացրո՛ւ աղյուսակով։

	Օգտակար հատկություններ	Վնասակար հատկություններ
Տաքդեղ		
Խաղող		
Ալոճ		
Շաքար		

Տնային պարտադիր առաջադրանքներ

- Լրացրո՛ւ բաց թողած տառերը և 3-5 բառով շարունակի՛ր շարքերը։

ար-արամիտ, _____

հեր-ական, _____

ար-այական, _____

վարա-ույր, _____

համ-երել, _____

լուսամ-ոփ, _____

ա-ակողմյան, _____

ա-քալույս, _____

անհամար-ակ, _____

քաղ-ած, _____

Բաժանվե՛ք խմբերի և համապատասխան դերաբաշխմամբ պատրաստվե՛ք հաջորդ դասաժամին ***ստվերային թատրոն*** ներկայացնելու։ Մի խումբը թող զբաղվի հեքիաթը բեմագրի(սցենարի) վերածելով, մյուսները՝ թղթե ստվերների և դերակատարումների պատրաստմամբ։

Տնային ոչ պարտադիր առաջադրանք

- Եթե ուզում ես ավելին իմանալ գրողների ընկերության մասին, մո՛ւտք գործիր այս հղումով (https://www.vnews.am/culture/tumanyani-ev-isahakyani-ynkerutyuny/) և կարդա՛։

Վ. Սարոյան, «Երեք խորհուրդ»։ Ղ-խ բաղաձայնների ուղղագրությունը

- ա/Աշխատե՛ք խմբերով։ Ի՞նչ եք հասկանում՝ «խորհուրդ» ասելով։ Այնպիսի բառեր կամ մտքե՛ր գրեք, որոնք, ըստ ձեզ, կապ ունեն *խորհրդի* հետ։

խորհուրդ

բ/ Մտագրոհի արդյունքում ի՞նչ եզրահանգում արիք։ Գրի՛ առեք և ընթերցե՛ք։

Աշխատե՛ք զույգով։ Հեքիաթն ընթերցե՛ք հատվածաբար և լուռ։ Յուրաքանչյուր հատվածից հետո հարցե՛ր ձևակերպեք և առաջադրե՛ք մյուս զույգերին։

Հատվածը	Սկիզբը
2-րդ	Ճանապարհին նա հանդիպում է. . . .
3-րդ	Այս խրատն էլ իմանալով՝ պանդուխտը. . . .
4-րդ	Որոշ ժամանակ անց. . . .
5-րդ	Պանդուխտը հանկարծ հիշում է. . . .
6-րդ	Վերջապես նա տուն է վերադառնում։

- Ենթադրի՛ր, թե իմաստունի օգնականն ես և պետք է կոնկրետ օրինակներով մեկնաբանես նրա խրատները։ Փորձի՛ր։

- Շրջաններում գրի՛ր բնութագրող բառեր. ինչպիսի՞ն էր պանդուխտ ամուսինը՝



- ա/Բառերից յուրաքանչյուրին 3-ական հատկանի՛շ «նվիրիր»։









բ/ Բառակապակցություններից չորսը գործածի՛ր նախադասություններում։

գ/ Բառակապակցություններից չորսը գործածի՛ր մտքով իրար հետ կապված նախադասություններում։

- ա/Լրացրո՛ւ. ղ, թե՞ խ։

Հա-թանակ, դժո-ք, պ-տոր, շա-կապ, ճե-քել, դրա-տ, ծա-սել, թու-թ, թա-տ, խրո-տ, բա-տավոր, թու-ս, կե-տոտ, ա-տորոշում, զ-ջալ, մա-թանք, ե-բայրասեր, գա-թական, քա-ցր, վա-ճան, ո-կույզ, թ-կի, թու-պ, սե-մել, փա-չել, խա-տել, ու-տապան, ու-տավոր, ծա-կեփունջ, նա-կին, նա-քան, ամբո-ջ, առո-ջություն, ա-քատ, խե-ճ, մե-ք, կմա-ք, ո-բ, ապու-տ, ա-բարկդ, բա-տակ, կո-ք, բռ-կ, տա-տակ, Վա-թանգ, ա-ջիկ, պանդու-տ, ո-ջ։

բ/ Բառերից երկուսը գործածի՛ր նույն նախադասության մեջ։ Այս սկզբունքով կազմի՛ր երեք նախադասություն։

գ/ Բառերից երեքը կամ ավելին գործածի՛ր նույն նախադասության մեջ։ Այս սկզբունքով կազմի՛ր երեք նախադասություն։

Օրինակ՝ Կե-տոտ ա-բարկդի կո-քին տա-տակներ կային։

- Լրացրո՛ւ ղ կամ խ տառերը, բառազույգից ընտրի՛ր այն բառը, որը պատկերվածի անվանումն է:



ու-տ

ու-տ

տա-տակ

բա-տակ



թ-ուվ

թ-ուլ

սխտ-որ

սխտ-որ

- Լրացրո՛ւ ղ կամ խ տառերը, ապա «մոլորված» մասերը միացնելով՝ ամբողջացրո՛ւ առած-ասացվածքները։

Թա-տից փա-չեմ,	հա՛րս, դո՛ւ իմացիր։
Ա-բը քանի իրար տան,	օձը բնից կհանի։
Ծովն անցնողը	սարը սարին կդնեն։
Անուշ լեզուն	ջուրը կցամաքի։
Բա-տ ունեցար՝	բա-տից ո՞ւր փա-չեմ։
Ա-ջի՛կ, քեզ ասեմ,	հոտը կելնի։
Անբա-տ մարդը ծովն էլ գնա,	առվում չի խե-դվի։
Քա-ցր լեզուն	լեռ քարն էլ կկանաչի։
Ե-բայրը ե-բորը թե օգնի,	մեղրից էլ քա-ցր է։

- Հեքիաթի վերաշարադրումն սկսի՛ր վերջից։ Թող ամուսինը կնոջը պատմի իր գլխով անցածը։ Կարող ես սկսել այսպես՝

Ամուսնու հարստանալուց երջանկացած կինը չի համբերում, սկսում է հարցուփորձ անել, թե էդ ինչպե՛ս պատահեց, որ ծույլ ու անբանը դարձավ մեծ ունեցվածքի տեր։ Ամուսինը պատմում է. . .

- Կազմե՛ք գործողությունների շղթա։ Օղակների քանակով նախադասությունն՝ գրեք, որոնք համառոտ կպատմեն հեքիաթում կատարվածը։

Օրինակ՝ *1. Կինը վռնդեց ծույլ ամուսնուն։*

- *Ի՞նչ սովորեցիր «Երեք խորհուրդ» հեքիաթից: Գրի՛ր մեկ նախադասությամբ:*

Օրինակ՝

Խրա՛տ վերցրեք, ոչ թե արծաթ:

Տնային առաջադրանքներ

- Ուղղագրական առաջադրա՛նք կազմիր՝ «Ուղղի՛ր իմ սխալները»: Գործածի՛ր անցած բոլոր բաղաձայնների ուղղագրության բառեր:

- Գովազդի՛ր «Երեք խորհուրդ» հեքիաթը, որպեսզի շատերը ցանկանան կարդալ: Կարող ես մեծ թղթի վրա գրել գովազդի տեքստը և ձևավորել: